ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատված է

________ԿՅՍ_____ ֆակուլտետի խորհրդի

_4__ նիստում

"__02__"_________12______2019 թ.

________________

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2019

## I. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

**Թվարկել և վերլուծել Ֆակուլտետի գործունեությունը հաշվետու ժամանակահատվածում իր առաքելության և ռազմավարական պլանին համապատասխան:**

Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի 2019 թվականի գործունեությունն ուղղված է եղել համալսարանի հիմնական առաքելության, այն է՝ կրթության, սոցիալական, հումանիտար ոլորտներում ազգային և միջազգային փորձին համապատասխան բարձրորակ մասնագետների պատրաստումը, բարձրագույն և հետբուհական կրթական ծրագրերի միջոցով գիտելիքի ստեղծումը, հմտությունների ձևավորումը, պահպանումը և հանրային ոլորտում մանկավարժական արժեքների տարածումը: Ըստ 2016-2020 զարգացման ռազմավարական ծրագրի գործողությունների պլանի 2019 թվականի ընթացքում իրականացվել են աշխատանքներ հետևյալ ուղղություններով:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 1. ԲԱՐՁՐՈՐԱԿ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ

1. Ֆակուլտետում իրականացվել են ՄԿԾ առկա վիճակի գնահատման, կարիքների վերլուծություն, ազգային և ոլորտային շրջանակներին համապատասխանեցում, նմանօրինակ ծրագրերի հենանիշում (բենչմարք): Մասնավորապես իրականացվել են կարիքների վերհանմանն ուղղված հարցումներ և դրանց վերլուծություններ ֆակուլտետում, ազգային և ոլորտային շրջանակներին համապատասխանեցված կրթամասերի և վերջնարդյունքների ձևակերպման աշխատանքներ, ինչպես նաև վերանայվել են կրթական ծրագրերը՝ ազգային և միջազգային առարկայական հենանիշներին (բենչմարք) համապատասխան: Արդյունքում ֆակուլտետում ստեղծվել են վերհանված կարիքների որակական վերլուծական փաթեթներ, ՄԿԾ-ների վերամշակված մասնագրեր:
2. Ֆակուլտետում մշակվել և ներդրվել են կրթական ծրագրերի մշակման, իրականացման և մշտադիտարկման աշխատանքներում շահակիցների ներգրավվածությունն ընդլայնող ծրագիր: Ֆակուլտետի խորհրդի կազմում ընդլայնվել է արտաքին շահակիցների ընդգրկվածությունը: Մասնավորապես, 2018 թվականից խորհրդի կազմում ներգրավվել էր <<Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն>> ՊՈԱԿ-ի վերականգնողական ծրագրերի իրականացման գծով տնօրենի տեղակալ Գայանե Ռուբիկի Հովակիմյանը, իսկ 2019 թվականին ընգրկվել է նաև ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության <<Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ>> ՊՈԱԿ-ի տնօրեն, տ.գ.թ., դոցենտ Արման Ալբերտի Սարգսյանը:
   Ստեղծվել են կրթական ծրագրերի վերանայման աշխատանքային հանձնախմբեր, որտեղ ընդգրկվել են և արտաքին և ներքին շահակիցներ: ,,Հոգեբանություն" մասնագիտության բակալավրիական և մագիստրոսական կրթական ծրագրերը ներկայացվել են գործատուների /արտաքին կարծիք/ քննարկմանը: Արդյունքում ֆակուլտետում առկա են մշակված ՄԿԾ-ներ՝ շահակիցների ընդգրկուն մասնակցությամբ, շահակիցների ընդգրկման գործընթացը նկարագրող ու գնահատող աշխատանքային փաստաթղթեր:
3. Իրականացված աշխատանքներին համապատասխան ֆակուլտետում իրականացվել են կրթական ծրագրերում դասավանդման, ուսումնառության և արդյունքների գնահատման միասնական չափանիշների գործարկման աշխատանքներ: Մշակվել և ներդրվել են միասնական չափանիշներով ստեղծված դասավանդման, ուսումնառության և արդյունքների գնահատման մեխանիզմներ: Կրթական ծրագրերի պատասխանատու ամբիոններում առկա են դասավանդման, ուսումնառության և արդյունքների գնահատման միասնական չափանիշներով ստեղծված առարկայական նկարագրեր:
4. Շարունակվել են ակադեմիական ազնվության և գրագողության կանխարգելմանն ուղղված աշխատանքները: Կրթական ծրագրերի պատասխանատու ամբիոններում վերանայվել են գիտական աշխատանքների /ռեֆերատ, կուրսային, ավարտական աշխատանքներ, մագիստրոսական և թեկնածուական ատենախոսություններ/ թեմաները, ընտրվել են ավելի կոնկրետ և արդիական հետազոտական թեմաներ, որոնք միտված են ուսանողների մեջ հետազոտական կարողությունների և հմտությունների ձևավորմանը ժամանակակից հասարակության արդի հիմնախնդիրների մասնագիտական ուսումնասիրության, վերլուծության արդյունքում: Ընդլայնվել է նաև սովորողների գրավոր և ինքնուրույն աշխատանքների ստուգման և գնահատման ձևերում ստեղծագործական - հետազոտական աշխատանքների ծավալը, ինչպես նաև մտածողության ու թիմային հետազոտական աշխատանքների կարողությունների զարգացմանը միտված աշխատանքները:
5. Պրակտիկայի, կարիերայի և ուսումնառության կողմնորոշման գործընթացների արդյունավետության բարձրացման նպատակով իրականացվել են կրթական ծրագրերի պատասխանատու ամբիոններ-ֆակուլտետ-պրակտիկայի կենտրոն, ֆակուլտետ-կարիերայի կենտրոն պրակտիկայի բազաներ համատեղ համագործակցության ծրագրեր /տես՝ գծապատկեր 1/: Մասնավորապես, կարերիայի կենտրոնn իրականացրել է ավարտական կուրսի ուսանողների սեմինար հետևյալ թեմայով՝ ,,Ինչպես գրել CV"՝ ուսանողների հետագա մասնագիտական կարիերայի արդյունավետ կազմակերպման, CV-արդյունավետ կազմման, հետագա աշխատանքի որոնման համար: Որպես գործընթացի տրամաբանական բաղադրիչ ֆակուլտետը հավաքագրել է ավարտական կուրսերի ուսանողների տվյալները կարերիայի կենտրոնի շրջանավարտների տվյալների բազայում ընդգրկելու, հետագայում գործատուներին տրամադրելու համար: Ինչպես նաև համալսարանի

վերլուծության են ենթարկվել հեռակա ուսուցման համակարգի ՍРջանավարտների զբաղվածության մասին տեղեկատվությունը և տրամադրվել համալսարան-գործատու համագործակցության կենտրոնին:

6. Ֆակուլտետում իրականացվել են որակի ներքին ապահովման մշտադիտարկման գործընթացներ, որոնց մասին զեկուցվել է կրթական ծրագրերի պատասխանատու ամբիոններում և ֆակուլտետի խորհրդի նիստերում:
7. Վերանայել և կատարելագործվել են ԿԾ և ուսումնական գործընթացի արդյունավետությունն ապահովող տեղեկատվական փաթեթները: Արդյունքում ստեղծվել են ՄԿԾ-ների արդյունավետությունն ապահոցող ներքին տեղեկատվության կատարելագործված փաթեթներ:
8. Ակտիվ կիրառվել է ՀՊՄՀ-ում ստեղծված նորարարական կրթական միջավայրը՝ ուսանողների և դասախոսների շրջանում կրթական էլեկտրոնային հարթակի և համացանցի սոցիալական ռեսուրսների, սոցիալական մեդիայի միասնականացման միջոցով: Ֆակուլտետի կրթական ծրագրերի պատասխանատու ամբիոններում քննարկվել են Google Classroom էլեկտրոնային հարթակում դասընթացների տեղակայման, նյութերի մատուցման, էլեկտրոնային գնահատվող և չգնահատվող հանձնարարականների ներկայացման արդյունավետ հնարներն ու ձևերը, ինչպես նաև ՊԴԱ կազմի՝ հարթակում աշխատանքի և ուսանողների ներգրավվածության հարցերը /հիմք՝ ամբիոնների նիստերի արձանագրությունները, ֆակուլտետի խորհրդի նիստերի արձանագրությունները և ռեկտորատի նիստերի զեկույցները/:

## II. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

| Վերլուծել հաշվետու տարում ֆակուլտետի կազմակերպական կառուցվածքի արդյունավետությունը՝ ըստ Պլանավորում, Իրականացում, Գնահատում, Բարելավում շրջափուլի: Խոսել ուսանողների, դասախոսների, գործատուների մասնակցության մասին: |
| --- |
| Ֆակուլտետն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ Սահմանադրությամբ, <<Կրթության մասին>>, <<Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին>> ՀՀ օրենքներով, Համալսարանի կանոնադրությամբ և համապատասխան այլ իրավական ակտերով, ինչպես նաև Համալսարանի և Ֆակուլտետի կառավարման մարմինների իրավասության շրջանակներում ընդունված իրավական ակտերով: Ֆակուլտետի խորհուրդը դեկանի նախագահությամբ գործող Ֆակուլտետի կառավարման մարմին է, որի որոշումները պարտադիր են Ֆակուլտետի սովորողների և աշխատողների համար:Ֆակուլտետի խորհրդի կազմը ձևավորվել է պրոֆեսորադասախոսական կազմից ,ուսանողության կողմից առաջադրված ներկայացուցիչներ (առնվազն 25 %)., ներքին և արտաքին շահառուներից և գործատուներից:Խորհրդում քննարկվում և լուծվում են ֆակուլտետի ուսումնական, գիտական աշխատանքների, միջազգային կապերի և այլ գործունեության հետ կապված հարցեր, գիտական խորհրդում հաստատելու համար ռեկտորին է ներկայացնում Ֆակուլտետի ուսումնական պլանները, սահմանված կարգի համաձայն՝ իրականացվում են Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի ընտրությունները, քննարկվում են ամբիոնների ուսումնամեթոդական և գիտահետազոտական աշխատանքների մասին հաշվետվությունները, Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտահետազոտական և կրթական աշխատանքների պլանավորման և որակավորման բարձրացման հարցերը,ուսանողների պրակտիկայի արդյունքները: Հաստատվում է Ֆակուլտետի զարգացման ծրագրերը,ասպիրանտների անհատական պլանները, ասպիրանտների ու հայցորդների տարեկան ատեստացիայի արդյունքները: Մշակվում և իրականացվում են միջոցառումներ Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտահետազոտական և որակավորման, ուսանողների կրթության որակը բարձրացնելու և Ֆակուլտետում կրթության որակի ապահովման հարցերը: Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմը և ուսանողները կառավարման գրեթե բոլոր մակարդակներում անմիջականորեն մասնակցում են որոշումների ընդունման գործընթացին, նրանց մասնակցությունը կառավարման մարմիններում կանոնակարգված է, իսկ նրանց ընտրությունն այդ մարմիններում իրականացվում է համաձայն գործող ընթացակարգի՝ ներքևից վերև: Ֆակուլտետի խորհրդի կազմը բաղկացած է 25 ներկայացուցչից:<br><br>Կրթության հոգեբանության ֆակուլտետի դեկանն է հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Ռուզաննա Համբարձումի Պետրոսյանը, դեկանի ուսումնական |

|  |
| --- |
| աշխատանքների գծով տեղակալն է հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Լիդա Ռազմիկի Արամյանը, գիտական և միջազգային համագործակցության հարցերով տեղակալն է հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Սոնա Արտակի Մակիչյանը: Ֆակուլտետի կազմում գործում են երեք հիմնական ամբիոններ՝ Հոգեբանության՝ ամբիոնի վարիչի պաշտոնակատար, հոգեբանական գիտությունների դոկտոր, Վազգեն Հենրիկի Մարգարյան /ՀՊՄՀ-ի ռեկտորի 2017թ հուլիսի 11-ի թիվ 2447-Ա հրամանի համաձայն/, կիրառական հոգեբանության /ամբիոնի վարիչ, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սամվել Սուրենի Խուդոյան/, Սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի /ամբիոնի վարիչի պաշտոնակատոր, սոցիոլոգիական գիտությունների թեկնածու, դոցենտ Վիգեն Մաթևոսի Ծամիրյանը /ՀՊՄՀ-ի ռեկտորի 2019թ նոյեմբերի 26-ի թիվ 3975-Ա հրամանի համաձայն/: Ֆակուլտետը սպասարկում է նաև համահամալսարանական մանկավարժության ամբիոնը՝ սոցիալական մանկավարժություն մասնագիտությունը և բակալավրում և մագիստրատուրայում, ինչպես նաև մի շարք այլ համահամալսարանական ամբիոններ:<br><br>Ֆակուլտետը հաշվետու տարում հնարավորություն է տվել դասախոսներին և ուսանողներին մասնակցել իրենց առնչվող որոշումների կայացմանը հիմք՝ ամբիոնի նիստերի որոշումները և ֆակուլտետի խորհրդի կազմում կատարած գործունեությունը / դասախոսներին և ուսանողներին հնարավորություն է ընձեռնվել տարբեր օղակներում անմիջականորեն մասնակցել թե՛ ֆակուլտետի, թե՛ ամբիոնների գործընթացներին և թե՛ համալսարանի վերաբերյալ որոշումների կատարումներին: ՊԻԳԲ շրջափուլի հիմնական սկզբունքներին համապատասխան ուսումնական տարվա սկզբին մշակվել, քննարկվել և հաստատվել են ամբիոնների և ֆակուլտետի խորհրդի աշխատանքային պլանները, որոնցում ընդգրկված հարցերը բխում են 2016-2020 թվականների ռազմավարական ծրագրի 2019 թվականի գործողությունների պլանի քայլերից:Պարբերաբար քննարկվել են ներքին և արտաքին շահառուների առնչվող հարցերը,վեր են հանվել կրթության գործընթացի կազմակերպման և որակի ապահովման խնդիրները /հիմք ֆակուլտետի խորհրդի արձանագրությունները/:Հաշվետու ժամանակահատվածում ֆակուլտետի խորհրդի 2018-19 ուս. տարվա աշխատանքային պլանում քննարկման են դրվել կիսամյակային քննաշրջանի արդյունքները,բակալավրի կրթական ծրագրի մանկավարժական, ուսումնական և մագիստրոսի կրթական ծրագրի մասնագիտական պրակտիկաների կազմակերպման արդյունքները, մագիստրոսական թեզերի ,ավարտական և կուրսային աշխատանքների թեմաների քննարկումը հաստատումը,հեռակա ուսուցման համակարգի ուսումնական գործընթացների կազմակերպման հարցեր,Քննարկվել են նաև ամբիոնների ասպիրանտների և հայցորդների ատեստավորման արդյունքները, հարցեր միջազգային համագործակցության փոխշահավետ կապերի վերաբերյալ, ինչպես նաև Կրթության որակի բարելավմանն ուղղված անելիքների մասին:<br><br>Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմից երկուսը՝ դեկան Ռ.Պետրոսյանը, Կիրառական հոգեբանության ամբիոնի վարիչ Ս. Խուդոյանը, իսկ ուսանողներից՝ հոգեբանություն մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի Սյուզաննա Բաբիկյանը և Սոցիոլոգիա մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի Սեդա Պետրոսյանը ներգրավված են գիտական խորհրդում , կառավարման խորհրդում՝ դասախոսներից Կ. Վարդանյանը , իսկ ուսանողներից մագիստրատուրայի իրավաբանական հոգեբանություն մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողուհի Ա.Գաբրիելյանը:<br><br>Ֆակուլտետի ուսումնական գործընթացն կառավարվում և իրականացվում է համալսարանի Կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչության կողմից ընդունված և հաստատված ուսումնական պլանների, ծրագրերի, հաստատված գրաֆիկների, դասացուցակների հիման վրա: |
|  |

III. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

**Մագիստրատուրա**

| Վերլուծել ֆակուլտետում ՄԿԾ-ների բարելավման ուղղությամբ տարված աշխատանքները, նշել ուսումնառության ակնկալվող արդյունքների համահունչ լինելը և համադրելիությունը մասնագիտական որակավորմանը և Որակավորումների ազգային շրջանակին: | | |
|---|---|---|
| **Դասիչը** | **Մասնագիտությունը** | **Որակավորումը** |
| 031301.01.7 | Հոգեբանություն | Հոգեբանության մագիստրոս |
| 031301.04.7 | Զինվորական հոգեբանություն | Հոգեբանության մագիստրոս |
| 031301.06.7 | Կլինիկական հոգեբանություն և հոգեթերապիա | Հոգեբանության մագիստրոս |
| 031301.07.7 | Անձի հոգեբանություն և հոգեբանական խորհրդատվություն | Հոգեբանության մագիստրոս |
| 031301.08.7 | Սոցիալական և քաղաքական հոգեբանություն | Հոգեբանության մագիստրոս |
| 031301.10.7 | Գործնական հոգեբանություն | Հոգեբանության մագիստրոս |
| 031301.11.7 | Իրավաբանական հոգեբանություն | Հոգեբանության մագիստրոս |
| 031301.12.7 | Ընտանիքի հոգեբանություն | Հոգեբանության մագիստրոս |
| 031301.02.7 | Մանկավարժական հոգեբանություն | Հոգեբանության մագիստրոս |
| 011301.03.7 | Սոցիալական մանկավարժություն | Մանկավարժության մագիստրոս |
| 031401.01.7 | Սոցիոլոգիա | Սոցիոլոգիայի մագիստրոս |
| 092301.01.7 | Սոցիալական աշխատանք | Սոցիալական աշխատանքի մագիստրոս |

## Բակալավր

| Դասիչը | Մասնագիտությունը | Որակավորումը |
|---|---|---|
| 031301.01.6 | Հոգեբանություն | հոգեբանության բակալավր |
| 011301.03.6 | Սոցիալական մանկավարժություն | մանկավարժության բակալավր |
| 031401.01.6 | Սոցիոլոգիա | Սոցիոլոգիայի բակալավր |
| 092301.01.6 | Սոցիալական աշխատանք | Սոցիալական աշխատանքի բակալավր |

Համաձայն ուսումնական պլանի և պրակտիկայի ժամանակացույցի՝ Ֆակուլտետի բակալավրիատի մանկավարժական և ուսումնական պրակտիկաները կազմակերպվել են.

- Հոգեբանություն մասնագիտության բակալավրիատի 2-րդ կուրսի 120 ուսանողների ուսումնաճանաչողական պրակտիկա.

Հոգեբանություն մասնագիտության բակալավրիատի 2-րդ կուրսի 120 ուսանողների ուսումնաճանաչողական պրակտիկան կազմակերպվել է 2019 թ-ի փետրվարի 26-ից մինչև մայիսի 21-ը (շաբաթական մեկ օր):

1.Իրականացված նախապատրաստական աշխատանքներ.

1. Դպրոցների հետ նախնական ծանոթություն, պայմանավորվածության ձեռքբերում
2. Պրակտիկայի մեկնարկային կոնֆերանսի անցկացում
3. Ուսանողների կարիքների վերլուծություն
4. Առցանց ուսուցման պայմանների ստեղծում
5. Մեթոդիստներին, հոգեբաններին և մանկավարժներին տրվել են խմբերի աշխատանքային պլանների կազմման ցուցումներ՝ ըստ ուսումնաճանաչողական պրակտիկայի նկարագրի:

2.Տեղեկություն պրակտիկայի դպրոցների, ուսանողների թվաքանակի և մեթոդիստների մասին:

| Կրթության աստիճանը | Կուրս | Ուսանողի քանակը | Պրակտիկայի տեսակը | Պրակտիկայի անցկացման վայրը | Մերոդիստի (ղեկավարի) անուն, ազգանուն |
|---|---|---|---|---|---|
| բակալավրիատ | 2-րդ | 16 | ուսումնաճանաչողական պրակտիկա | «Ապագա» հոգեբանական ծառայությունների կենտրոն | Մերոդիստ՝ Արմեն Բեջանյան, հոգեբան՝ Անի Նազարյան, մանկավարժ՝ Աննա Հակոբյան |
| բակալավրիատ | 2-րդ | 15 | ուսումնաճանաչողական պրակտիկա | Երևանի Պ. Ցավորովի անվան թիվ 131 հիմնական դպրոց | Մերոդիստ՝ Գոռ Եսայան, հոգեբան՝ Նարինե Ստեփանյանմանկավարժ՝ Արմենուհի Մանուկյան |
| բակալավրիատ | 2-րդ | 15 | ուսումնաճանաչողական պրակտիկա | Ա. Հովհաննիսյանի անվան թիվ 194 հիմնական դպրոց | Մերոդիստ՝ Լևոն Սարգսյան, հոգեբան՝ Սիրինա Առաքելյան, մանկավարժ՝ Արմինե Բաղդասարյան |
| բակալավրիատ | 2-րդ | 15 | ուսումնաճանաչողական պրակտիկա | Երևանի Մ. Մելքոնյանի անվան թիվ 11 դպրոց | Մերոդիստ՝ Անի Նազարյան, հոգեբան՝ Արմեն Բեջանյան, մանկավարժ՝ Փիրուզա Սարգսյան |
| բակալավրիատ | 2-րդ | 14 | ուսումնաճանաչողական պրակտիկա | Երևանի թիվ 104 հիմնական դպրոց | Մերոդիստ՝Գայանե Խաչիկյան, հոգեբան՝ Մարիաննա Ավետիսյան, մանկավարժ՝ Նելլի Կարապետյան |
| բակալավրիատ | 2-րդ | 15 | ուսումնաճանաչողական պրակտիկա | Երևանի թիվ 100 հիմնական դպրոց | Մերոդիստ՝Նարինե Ստեփանյանհոգեբան՝ Գոռ Եսայան, մանկավարժ՝ Սուսաննա Զանիկյան |
| բակալավրիատ | 2-րդ | 15 | ուսումնաճանաչողական պրակտիկա | Երևանի Մ. Նալբանդյանի անվան թիվ 33 հիմնական դպրոց | Մերոդիստ՝Սիրինա Առաքելյան, հոգեբան՝ Լևոն Սարգսյան, մանկավարժ՝ Լյովա Հարությունյան |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| բակալավրիատ | 2-րդ | 15 | ուսումնաճանաչողական պրակտիկա | ՀՊՄՀ-ի «Տախմատ» գիտահետազոտական ինստիտուտ | Մեթոդիստ՝Մարիաննա Ավետիսյան, հոգեբան՝ Գայանե Խաչիկյան, մանկավարժ՝ Գրետա Հակոբյան |

Իրականացրել են դասի դիտարկումներ, դասի հոգեբանամանկավարժական վերլուծություններ, մանկավարժական իրադրությունների վերլուծություններ:

Կատարել են աշակերտների անձնային և անհատական հատկությունների ուսումնասիրություններ, արդյունքների վերլուծություններ:

❖ Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի 2019-2020 ուս. տարվա 1-ին կիսամյակի Հոգեբանություն մասնագիտության բակալավրիատի 4-րդ կուրսի ուսանողների մանկավարժական (կիրառական) պրակտիկա.

Հոգեբանություն մասնագիտության բակալավրիատի 4-րդ կուրսի ուսանողների մանկավարժական (կիրառական) պրակտիկան մեկնարկել է նոյեմբերի 4-ին՝ 6 շաբաթ տևողությամբ մինչև դեկտեմբերի 16-ը:

1.Իրականացված նախապատրաստական աշխատանքներ.

1. Նախնական այցելություններ պրակտիկայի կենտրոններ
2. Խմբերի կազմման նպատակով հանդիպում-քննարկումներ ուսանողների հետ
3. Ուսանողների կարիքների վերլուծություն
4. Պրակտիկայի կենտրոնների հետ ծանոթություն, վերջիններիս գործունեության ու առանձնահատկությունների ներկայացում
5. Պրակտիկայի մեկնարկային կոնֆերանսի անցկացում
6. Առցանց ուսուցման պայմանների ստեղծում
7. Մեթոդիստներին տրվել են խմբերի աշխատանքային պլանների կազմման ցուցումներ՝ ըստ մանկավարժական (կիրառական) պրակտիկայի նկարագրի և պրակտիկայի կենտրոնի առանձնահատկությունների:

2.Տեղեկություն պրակտիկայի կենտրոնների, ուսանողների թվաքանակի և մեթոդիստների մասին:

| Կրթության աստիճանը | Կուրս | Ուսանողի քանակը | Պրակտիկայի տեսակը | Պրակտիկայի անցկացման վայրը | Մեթոդիստի (ղեկավարի) անուն, ազգանուն |
|---|---|---|---|---|---|

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| բակալավրիատ | 4-րդ | 11 | Կիրառական / ամփոփիչ պրակտիկա | «Ապագա» հոգեբանական ծառայությունների կենտրոն | Անահիտ Արզումանյան |
| բակալավրիատ | 4-րդ | 10 | Կիրառական / ամփոփիչ պրակտիկա | Փսիլայֆ հոգեբանական աջակցման կենտրոն | Գայանե Խաչիկյան |
| բակալավրիատ | 4-րդ | 10 | Կիրառական / ամփոփիչ պրակտիկա | Հանրապետական թիվ 1 հատուկ կրթահամալիր | Լևոն Լարզոյան |
| բակալավրիատ | 4-րդ | 9 | Կիրառական / ամփոփիչ պրակտիկա | Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոնում /ՀԱՊԱԿ/ | Մերի Գոաբսկա |
| բակալավրիատ | 4-րդ | 10 | Կիրառական / ամփոփիչ պրակտիկա | «Բանալի» ընտանիքի կենտրոն | Անի Նազարյան |
| բակալավրիատ | 4-րդ | 10 | Կիրառական / ամփոփիչ պրակտիկա | «Երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ | Գոռ Եսայան |
| բակալավրիատ | 4-րդ | 10 | Կիրառական / ամփոփիչ պրակտիկա | «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ | Նարինե Ստեփանյան |
| բակալավրիատ | 4-րդ | 7 | Կիրառական / ամփոփիչ պրակտիկա | ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ԲՍՓ գործակալություն | Զարզանդ Ասատրյան |
| բակալավրիատ | 4-րդ | 11 | Կիրառական / ամփոփիչ պրակտիկա | ՀՊՄՀ-ի «Ճախմատ» գիտահետազոտական ինստիտուտ | Արմեն Բեջանյան |
| բակալավրիատ | 4-րդ | 9 | Կիրառական / ամփոփիչ պրակտիկա | Ամի ակումբ երեխաների զարգացման կենտրոն | Սիրինա Առաքելյան |

Պրակտիկայի 4 շաբաթների ընթացքում ուսանողները ծանոթացել են կենտրոնների կառուցվածքին, իրավական – նորմատիվային փաստաթղթերին, աշխատանքային և բազմամասնագիտական թիմերի գործառույթներին: կենտրոնների աշխատանքին, նրանց առաքելությանն ու պրակտիկ գործունեությանը, հոգեբանի աշխատորոշիչ աշխատանքի մեջ օգտագործվող միջոցներին և հնարներին: Կատարել են կենտրոնների շահառուների անձնային և անհատական հատկությունների ուսումնասիրություններ, արդյունքների վերլուծություններ, տվյալներ են հավաքագրել նաև ուսումնասիրվող օբյեկտների ընտանիքի, ընտանեկան հարաբերությունների, ծնողական դաստիարակության առանձնահատկությունների վերաբերյալ:

4. Հաջողված փորձի օրինակներ

1. Հանրապետական թիվ 1 հատուկ կրթահամալիրում ուսանողներն արդյունավետ համագործակցային աշխատանքներ են ունեցել կրթահամալիրի հոգեբանների հետ, կենտրոնի հոգեբանների օգնությամբ իրականացրել են խմբային աշխատանքներ:

2. Փսիլայֆ հոգեբանական աջակցման և «Բանալի» ընտանիքի կենտրոններում ուսանողները երեխաների հետ իրականացնում են անհատական և խմբային զարգացնող աշխատանքներ:

3. «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ում ուսանողներն անհատական և խմբային թրեյնինգային ձևաչափով աշխատանքներ են իրականացրել «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի անչափահաս և կին դատապարտյալների, ինչպես նաև «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի տղամարդ դատապարտյալների հետ: Հաջողված փորձը, ուսանողների հետաքրքրությունն ու մոտիվացիան կենտրոնի կողմից բարձր է գնահատվել, ինչը հիմք է հանդիսացել կազմակերպել ուսանողների այցը նաև Պրոբացիոն ծառայություն:

4. Արդյունավետ պրակտիկայի հաջողված փորձ ունենք «Ապագա» հոգեբանական ծառայությունների կենտրոնում:

5. Հետազոտական ծրագիր է պլանավորվել և իրականացվում է ՀՊՄՀ-ի «Ծախմատ» գիտահետազոտական ինստիտուտում:

5.Դժվարություններ

1. 2019-20թթ. ուսումնական տարվա 4-րդ կուրսի պրակտիկայի կազմակերպման հիմնական դժվարությունը թվով 97 ուսանողների համար կիրառական պրակտիկայի պահանջներին համապատասխան բազաների ընդլայնման և բացման հարցն էր:

2. Հետաքրքիր, միաժամանակ բարդ և դժվարություններով ընթացող փորձ ունենք Հակասոցիալական վարք դրսևորած երեխաների հանրապետական թիվ 1 հատուկ կրթահամալիրում: Հիմնական բարդությունը կրթահամալիրի սաների հետ ուսանողների անհատական կամ խմբային աշխատանքների կազմակերպումն է:

3. Նոր, միաժամանակ բարդ համագործակցության փորձի սկիզբ դրվեց Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ԲՍՓ գործակալության հետ:

- Հոգեբանություն մասնագիտության բակալավրիատի 3-րդ կուրսի 2-րդ կիսամյակի պրակտիկա.

Պրակտիկան կազմակերպվել է 2019 թվ-ի ապրիլ15—մայիսի 27ը ամիսներին 6-շաբաթյա տևողությամբ: Պրակտիկան անց է կացվել ՀՊՄՀ Շախմատ գիտահետազոտական ինստուտում, Երևանի Ապագա, Փսիլայֆ, Գտնված բանալի, Ծիածան, Շող, TMM քոլեջում, Նուբարաշենի երեխայի և ընտանիքի աջակցման կենտրոններում: Կազմակերպվել է նախնական կոնֆերանս: Նախապես մեթոդական նյութերն ու ուղեցույցները տրվել են ուսանողներին: Սահմանված ժամկետներում ստեղծվել են առցանց ուսուցման պայմաններ՝ էլեկտրոնային հարթակում ներգրավելով ուսանողներին:

Տեղեկություններ պրակտիկայի ծրագրի կատարման վերաբերյա.

Պրակտիկայի ծրագրով նախատեսված բոլոր պահանջները կատարվել են մեթոդիստի, պրակտիկայի բազայի ղեկավարի, մասնագետների և ուսանողների սերտ համագործակցության արդյունքնում: Մասնագետների կողմից կազմվել են թիմային աշխատանքի պլաններ: Աշխատանքները կազմակերպվել են համապատասխան նախատեսված պլանավորման: Էլեկտրոնային հարթակում ժամանակին տեղադրվել են աշխատանքային պլանը և անհրաժեշտ մեթոդական նյութերը, ինչպես նաև պրակտիկայի ողջ ընթացքը լուսաբանվել և քննարկվել են ընթացիկ հարցերը:

Պրակտիկայի ընթացքում ներդրվել է նոր գործիք՝ հոգեբանական աշխատանքի քարտեզագրում և երեխայի պորտֆոլիո (ոչ պարտադիր սկզբունքով): Ուսանողների կողմից կազմակերպվել է հրաժեշտի միջոցառում: Ֆակուլտետի դեկանատի կողմից կատարվել է հետևողական և ուղղորդող աշխատանք այդ ուղղությամբ:

Շախմատ գիտահետազոտական ինստիտուտում աշխատանքները կազմակերպվեն են հետևյալ հաջորդականությամբ.Պրակտիկայի մասնակիցների ինքնաներկայացում: Առաջադրանքների կատարման ժամանակացույցի հստակեցում:Ծանոթացում Շախմատ գիտահետազոտական ինստիտուտի ենթահամակարգերի գործունեությանը, մասնագիտական պրակտիկայի բովանդակությանը, խնդիրներին, նպատակներին:

Ծանոթություն Էգոսկոպ հոգեբանական օբյեկտիվ վերլուծությունների և թեստավորման համալիրի կիրառման գործառույթներին, ուսուցիչների հետ կազմակերպվող գիտափորձի համար նախատեսված ախտորոշիչ մեթոդիկայի փորձարկում:Կոտայքի մարզի դպրոցներում կազմակերպվող հետազոտություն: Կատարված աշխատանքի վերլուծություն: Թիմային աշխատանքի ընթացքում պրակտիկայի մասնակից ուսանողները նաև վերլուծել են մտածողության դիվերգենտության բացահայտմանն ուղղված համապատասխան մեթոդիկայի կիրառման արդյունքները:

Ապագա կենտրոնում ծանոթացել են երեխայի հոգեկան զարգացումը գնահատող փաթեթին և կիրառել են երեխայի զարգացման ծրագրային փաթեթը: Կիրառել են ռեֆլեքսոթերապիա, խաղային թերապիա, հեքիաթաթերապի: Ուսանողները հնարավորություն են ստացել ծանոթանալու քոլեջում աշխատող թիմի աշխատանքների ուղղություններին, գործառույթներին, ներգրավվել են քոլեջում իրականացվող հոգեբանական պրակտիկ աշխատանքներին, ծանոթացել են քեյսերի, անհատական իրավիճակների հետ, փորձել են տալ հոգեբանական եզրահանգումներ և արդյունավետ լուծման եղանակներ գտնել:

Կատարված աշխատանքների ուղղություններն են.

1. Պրակտիկ հոգեբանի աշխատանքի էթիկական նորմերը:

2. Հատուկ կարիքներով երեխաների ծնողների հետ աշխատանքի յուրահատկությունները,

3. Դերային խաղեր՝ ծնող-հոգեբան ձևաչափով,

4. *TMM* մեթոդի հետ ծանոթացում,

5. Անհատական հոգեբանական աշխատանք երեխաների հետ,

6. Հատուկ կարիքներով երեխաների հետ աշխատանքի յուրահատկություններըև այլն:

Ուսանողները.

- Իրականացրել են քննարկումներ,
- Ստեղծել են զարգացնող խաղեր, պարագաներ,
- Մշակել են թիմային աշխատանքի ծրագիր:

4. Պրակտիկայի գործընթացի ինքնավերլուծություն (վերլուծել սեփական աշխատանքի ուժեղ և թույլ կողմերը, վերջիններիս հաղթահարման համար ձեռնարկված քայլերն ու առաջարկներ բարելավման համար):

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
|---|---|

| | |
|---|---|
| Մասնագիտական թիմի բարձր պատրաստվածությունը և նվիրվածությունը:<br><br>Ուսանողների բարձր մոտիվացիան՝ ձեռք բերելու գործնական կարողություններ:<br><br>Թիմային համագործակցությունը:<br><br>Սեփական փորձով կիսվելու կարողությունը:<br><br>Մասնագիտական թիմի որակյալ և պրոֆեսինալ կազմի առկայությունը, որոնք ջանք չեն խնայում սովորեցնելու և կիսվելու իրենց մասնագիտական փորձով:<br><br>Խմբի հետ աշխատելու հմտություն<br><br>Լսելու կարողության ձևավորում<br><br>Մասնագիտական գիտելիքների ձեռքբերում | Կենտրոնի TMM Երեխաների սակավաթիվ լինելը /ֆոլեջը նորաբաց է/<br><br>Ուսանողների ներքին լարվածություն<br><br>Նախնական ընկճվածություն<br><br>Անհաջողությունից խուսափելու մոտիվացիա<br><br>Եղել են կենտրոններ / Բանալի, TMM, որոնք տարածքի խնդիր ունեն, իսկ մեր ուսանողների թվաքանակը 10-15 հոգի է, ուստի երկու հերթով են հաճախել կենտրոն, ինչը մեթոդիստի համար ստեղծել է անհարմարություններ/: |
| Ձեռնարկված քայլեր և առաջարկներ | |
| · Նախատեսում ենք պարբերաբար հանդիպումների ժամանակ լսել ուսանողների և պրակտիկայի բազաների ներկայացուցիչների առաջարկությունները պրակտիկայի գործընթացի բարելավման նպատակով: | |

❖ Սոցիոլոգիա և Սոցիոլոկան աշխատանք մասնագիտությունների ուսանողների ուսումնական պրակտիկաները կազմակերպվել են.

| Ուսուցման ձև | Կրթության աստիճան | Ուս. տարի | Մասնագիտություն | Կուրս | Կիսամյակ | Պրակտիկայի տեսակը | Անցկացման ժամկետները |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | |
| հեռակա | բակալավրիատ | 2018-2019 | սոցիոլոգիա | 5-րդ | 1-ին | մանկավարժական | հունվարի 29-ից փետրվարի 11-ը |
| հեռակա | բակալավրիատ | 2018-2019 | սոցիալական աշխատանք | 4-րդ | 1-ին | ուսումնական | փետրվարի 11-ից մարտի 11-ը |
| հեռակա | բակալավրիատ | 2018-2019 | սոցիոլոգիա | 3-րդ | 2-րդ | ուսումնական | փետրվարի 11-ից մարտի 11-ը |
| հեռակա | բակալավրիատ | 2018-2019 | սոցիալական աշխատանք | 3-րդ | 2-րդ | ուսումնական | փետրվարի 11-ից մարտի 11-ը |
| | | | | | | | |
| առկա | բակալավրիատ | 2018-2019 | սոցիոլոգիա | 3-րդ | 2-րդ | ուսումնական | ապրիլի 15-ից մայիսի 27-ը |
| առկա | բակալավրիատ | 2018-2019 | սոցիալական աշխատանք | 3-րդ | 2-րդ | ուսումնական | ապրիլի 15-ից մայիսի 27-ը |
| | | | | | | | |
| առկա | մագիստրատուրա | 2018-2019 | սոցիոլոգիա | 1-ին | 2-րդ | մասնագիտական | ապրիլի 1-ից ապրիլի 22-ը |
| առկա | մագիստրատուրա | 2018-2019 | սոցիալական աշխատանք | 1-ին | 2-րդ | մասնագիտական | ապրիլի 1-ից ապրիլի 22-ը |
| | | | | | | | |
| առկա | բակալավրիատ | 2019-2020 | սոցիոլոգիա | 3-րդ | 1-ին | ուսումնական | սեպտեմբերի 16-ից դեկտեմբերի 23-ը |
| առկա | բակալավրիատ | 2019-2020 | սոցիալական աշխատանք | 3-րդ | 1-ին | ուսումնական | սեպտեմբերի 16-ից |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | դեկտեմբերի *23*-ը |
| առկա | բակալավրիատ | *2019-2020* | սոցիոլոգիա | *4*-րդ | *1*-ին | ուսումնական | նոյեմբերի *4*-ից դեկտեմբերի *16*-ը |
| առկա | բակալավրիատ | *2019-2020* | սոցիալական աշխատանք | *4*-րդ | *1*-ին | ուսումնական | նոյեմբերի *4*-ից դեկտեմբերի *16*-ը |
| | | | | | | | |
| առկա | մագիստրատուրա | *2019-2020* | սոցիոլոգիա | *2*-րդ | *1*-ին | մասնագիտական | նոյեմբերի *11*-ից դեկտեմբերի *2*-ը |
| առկա | մագիստրատուրա | *2019-2020* | սոցիալական աշխատանք | *2*-րդ | *1*-ին | մասնագիտական | նոյեմբերի *11*-ից դեկտեմբերի *2*-ը |

| Ուսուցման ձև | Կրթության աստիճան | Ուս. տարի | Մասնագիտություն | Կուրս | Կիսամյակ | Պրակտիկայի տեսակը | Անցկացման ժամկետները |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | |
| հեռակա | բակալավրիատ | 2018-2019 | սոցիոլոգիա | 5-րդ | 1-ին | մանկավարժական | հունվարի 29-ից փետրվարի 11-ը |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հեռակա | բակալավրիատ | 2018-2019 | սոցիալական աշխատանք | 4-րդ | 1-ին | ուսումնական | փետրվարի 11-ից մարտի 11-ը |
| հեռակա | բակալավրիատ | 2018-2019 | սոցիոլոգիա | 3-րդ | 2-րդ | ուսումնական | փետրվարի 11-ից մարտի 11-ը |
| հեռակա | բակալավրիատ | 2018-2019 | սոցիալական աշխատանք | 3-րդ | 2-րդ | ուսումնական | փետրվարի 11-ից մարտի 11-ը |
| | | | | | | | |
| առկա | բակալավրիատ | 2018-2019 | սոցիոլոգիա | 3-րդ | 2-րդ | ուսումնական | ապրիլի 15-ից մայիսի 27-ը |
| առկա | բակալավրիատ | 2018-2019 | սոցիալական աշխատանք | 3-րդ | 2-րդ | ուսումնական | ապրիլի 15-ից մայիսի 27-ը |
| | | | | | | | |
| առկա | մագիստրատուրա | 2018-2019 | սոցիոլոգիա | 1-ին | 2-րդ | մասնագիտական | ապրիլի 1-ից ապրիլի 22-ը |
| առկա | մագիստրատուրա | 2018-2019 | սոցիալական աշխատանք | 1-ին | 2-րդ | մասնագիտական | ապրիլի 1-ից ապրիլի 22-ը |
| | | | | | | | |
| առկա | բակալավրիատ | 2019-2020 | սոցիոլոգիա | 3-րդ | 1-ին | ուսումնական | սեպտեմբերի 16-ից դեկտեմբերի 23-ը |
| առկա | բակալավրիատ | 2019-2020 | սոցիալական աշխատանք | 3-րդ | 1-ին | ուսումնական | սեպտեմբերի 16-ից |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | դեկտեմբերի 23-ը |
| առկա | բակալավրիատ | 2019-2020 | սոցիոլոգիա | 4-րդ | 1-ին | ուսումնական | նոյեմբերի 4-ից դեկտեմբերի 16-ը |
| առկա | բակալավրիատ | 2019-2020 | սոցիալական աշխատանք | 4-րդ | 1-ին | ուսումնական | նոյեմբերի 4-ից դեկտեմբերի 16-ը |
| | | | | | | | |
| առկա | մագիստրատուրա | 2019-2020 | սոցիոլոգիա | 2-րդ | 1-ին | մասնագիտական | նոյեմբերի 11-ից դեկտեմբերի 2-ը |
| առկա | մագիստրատուրա | 2019-2020 | սոցիալական աշխատանք | 2-րդ | 1-ին | մասնագիտական | նոյեմբերի 11-ից դեկտեմբերի 2-ը |

2. Պրակտիկայի կազմակերպման նախապատրաստական աշխատանքը

Կատարվել են նախնական կազմակերպչական աշխատանքներ.

- կազմակերպվել են պրակտիկայի նախապատրաստական կոնֆերանսներ;
- նախնական պայմանավորվածություն է ձեռք բերվել պրակտիկայի բազաների հետ;
- ուսումնասիրվել և գնահատվել են ուսանողների կարիքները. նախանշվել են դրանց գնահատման և վերանայման միջոցառումները՝ պրակտիկայի ուսանողների մասնակցության որակական բարելավում ապահովելու, պրակտիկայի համար անհրաժեշտ ուսումնական ռեսուրսների տրամադրման, դրանց հասանելիության և արդյունավետության գնահատման ու բարելավման, պրակտիկային առնչվող հարցերում առավել մեծ օժանդակություն և խորհրդատվություն տրամադրելու համար;

- ուսանողներին տրվել են մեթոդական նյութեր ու ուղեցույցներ;
- ստեղծվել են առցանց ուսուցման պայմաններ /Classroom հարթակում/:

3. Տեղեկություններ պրակտիկայի ծրագրի կատարման վերաբերյալ

Պրակտիկայի ծրագրով նախատեսված բոլոր պահանջները կատարվել են մեթոդիստների կողմից. այդ ուղղությամբ կատարվել է հետևողական և աջակցող աշխատանք.

- կազմակերպվել են հանդիպումներ ուսանողների և պրակտիկայի մեջ ընդգրկված մեթոդիստ դասախոսների հետ;
- մշակվել են թիմային աշխատանքի պլաններ և հանախման ժամանակացույցեր:

4.Պրակտիկայի բազաների բնութագիրը

Պրակտիկայի բազաներն են.

<u>Բակալավրիատ</u>

Սոցիոլոգիա՝

- Ø ՀՊՄՀ-ի Կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչություն
- Ø ՀՊՄՀ-ի «Ճախմատ» գիտահետազոտական ինստիտուտ
- Ø Հայաստանի գործատուների հանրապետական միություն
- Ø «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպություն /Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն/

Սոցիալական աշխատանք՝

- Ø Հայաստանի գործատուների հանրապետական միություն
- Ø «ՍՕՍ մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամ
- Ø «Սևան» քրեակատարողական հիմնարկ-կալանատուն /Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն/
- Ø «Մանկական զարգացման հիմնադրամ» մանկական կենտրոն
- Ø «Աջափնյակ վարչական շրջանի երեխաների սոցիալական հոգածության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն

Ø Հայ օգնության փոնդի «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամ

Ø Սոցիալական աջակցության վարչություն /Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն/

Ø «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպություն /Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն/

Ø «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն

Ø «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» պետական ոչ առևտրային կազմակերպություն

Ø «Երևան իմ սեր» հայկական բարեգործական հիմնադրամ

Ø «Փրկություն» հաշմանդամ երեխաների և երիտասարդների կետրոն բարեգործական հասարակական կազմակերպություն

<u>Մագիստրատուրա</u>

Սոցիոլոգիա՝

Ø Հայաստանի գործատուների հանրապետական միություն

Սոցիալական աշխատանք՝

Ø Նույն մասնագիտության բակալավրիատի 1-3-րդ կուրսեր

Ø «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպություն /Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն/

Անհատականներ /նշված հաստատություններում ուսանողները աշխատում են մասնագիտությամբ/՝

Ø «Ջերմիկ անկյուն» հիմնադրամ

Ø «Մանկական զարգացման հիմնադրամ» մանկական կենտրոն

Ø «Զարման» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն:

Պրակտիկայի բազաները համապատասխանում են մանկավարժություն և սոցիոլոգիա, սոցիոլոգիա և սոցիալական աշխատանք մասնագիտությունների ուղղվածությանը, ապահոված են պրակտիկայի համար անհրաժեշտ պայմաններով:

5. Պրակտիկայի կազմակերպման և անցկացման գործընթացի վերլուծություն

Պրակտիկայի ղեկավարների կողմից՝

· լրացվել են պրակտիկայի կազմակերպմանը վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը;

· պրակտիկայի վայրերի ղեկավարների հետ ձեռք են բերվել պայմանավորվածություններ՝ ուսանողների զբաղվածությունն ու կրթական գործընթացը կազմակերպելու վերաբերյալ;

· ուսանողներին տրվել են հանձնարարություններ;

· ուսանողների հետ քննարկվել են պրակտիկայի վայրում իրենց ունեցած հաջողություններն ու դժվարությունները, տրվել են լուծումներ ընթացիկ, մասնավոր խնդիրների հաղթահարման նպատակով /շրջայցերի ժամանակ բացահայտվել և վերացվել են խնդիրները, մասնավորապես՝ կապված թղթապանակների ձևավորման հարցերի հետ/;

· համագործակցությունը պրակտիկայի վայրերի պատասխանատուների հետ շարունակական է, մշտապես վերահսկվում են ուսանողների այցելությունները /պրակտիկայի ընթացքում իրականացվել են պարբերական այցելություններ, կազմակերպվել են հանդիպումներ խմբերի ավագների հետ, ինչպես նաև՝ամբողջ խմբի հետ/:

Ուսանողների զգալի մասը պարտաճանաչ հաճախել է պրակտիկայի և հնարավորություն է ստացել ներգրավվել պրակտիկ աշխատանքներին: Ուսանողների կողմից դրսևորվել է ակտիվություն, ինքնուրույնություն ու նախաձեռնողականություն, պրակտիկայի նկատմամբ վերաբերմունքը դրական էր:

2018-2019 ուս. տարվա 2-րդ կիսամյակի պրակտիկայի արդյունքներն ամփոփվել են. նախ՝ համապատասխան ուսումնական բազաներում, իսկ ամփոփիչ կոնֆերանսները տեղի են ունեցել բուհում, որի ընթացքում ուսանողները հանդես են եկել ներկայացումներով՝ թղթապանակների և PPT-ների միջոցով, կիսվել պրակտիկայից ստացած տպավորություններով ու ձեռքբերումներով: Պաշտպանության հանձնաժողովի կազմում ընդգրկված են դեկանը, պրակտիկայի տյալ խմբի մեթոդիստը, և ներկայացուցիչներ պրակտիկաների հիմնակարկներից:

Առկա բակալավրիատի պաշտպանության ընթացքը արձանագրվում /գրանցվում է պրակտիկայի վերջնական գնահատականը/ և ձայնագրվում է:

6. Ուսանողների աշխատանքների բնութագրեր

Պրակտիկայի բազաներից ուսանողները ստացել են դրական բնութագրեր և դրական գնահատականներ:

7. Պրակտիկայի ընթացքում հաջողված փորձի օրինակներ

Ø Հեռակա ուսուցման բակալավրիատի 2018-2019 ուստարվա 2-րդ կիսամյակի սոցիալական աշխատանք մասնագիտության 3-րդ կուրսի 10 ուսանողներ պրակտիկայի շրջանակներում Հայ օգնության փոնդի «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամում ծանոթացել են կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 3-18 տարեկան երեխաների /թափառաշրջիկ, աղքատ, անապահով, մուրացիկ, անապաստան, խնամազուրկ, լքված, բռնությունների զոհ, կրթությունից ու հանրային ծառայություններից դուրս մնացած, օրենքի հետ կոնֆլիկտի մեջ գտնվող, վարքային ու հոգեհուզական խնդիրներ ունեցող/ ու նրանց ընտանիքների /ծնողներ/խնամողներ/ հիմնախնդիրներին և կենտրոնի կողմից կիրառվող դրանց հակազդման միջոցներին: Մասնակցություն են ունեցել երեխայի/ընտանիքի կարիքների գնահատման, միջամտության պլանավորման աշխատանքներին, երեխայի լքումը կանխող իրազեկման աշխատանքներին, հիմնադրամի նախաձեռնությամբ իրականացվող տարբեր այլ երեխայակենտրոն ծրագրերին:

Ø Հեռակա ուսուցման բակալավրիատի 2018-2019 ուս. տարվա 1-ին կիսամյակի սոցիալական աշխատանք մասնագիտության 4-րդ կուրսի 7 ուսանողների ուսումնական պրակտիկան կազմակերպվել է Հայաստանի գործատուների հանրապետական միությունում:

Վերոնշյալ կազմակերպությունից ուսանողները ուղղորդվելով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարություն՝ իրենց հետագա աշխատանքը շարունակել են հետևյալ կազմակերպություններում՝

- «ՍՕՍ մանկական գյուղեր» ՀԲՀ /Արաբկիր վարչական շրջան/ /Մուրադյան Վիրաբ/
- «Սևան» քրեակատարողական հիմնարկ-կալանատուն /Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն/ /Ջաֆարյան Միեր/,
- «Մանկական զարգացման հիմնադրամ» մանկական կենտրոն /Մեսրոպյան Ալվարդ, Վարոսյան Մարիամ/,
- «Աջափնյակ վարչական շրջանի երեխաների սոցիալական հոգածության կենտրոն» ՊՈԱԿ-ում /Աջափնյակ/ /Խաչիկյան Արուսյակ, Սարգսյան Արամ/:

Կազմակերպված ուսումնական պրակտիկաների շրջանակներում յուրաքանչյուր ուսանող առաջին անգամ մասնակցել է սոցիալական դեպքի վարման շրջանակներում իրականացվող աշխատանքներին, /հարցազրույցի պլանի կազմում, տնայց, կարիքի գնահատում, սոցիալական պատմության և միջամտության պլանի կազմում, վերլուծություն, եզրակացություններ և առաջարկներ/:

Ø Առկա ուսուցման բակալավրիատի 2018-2019 ուստարվա 2-րդ կիսամյակի սոցիալական աշխատանք մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողների ուսումնական պրակտիկան կազմակերպվել է Աջափնյակ վարչական շրջանի երեխաների սոցիալական հոգածության կենտրոնում, ԱՍՀՆ-ի Սոցիալական աջակցության վարչությունում, Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտում, «ՍՕՍ մանկական գյուղեր» ՀԲՀ-ում, «Երևան իմ սեր» ՀԲՀ-ում:

Պրակտիկայի շրջանակներում ուսանողները ԱՍՀՆ-ի սոցիալական աջակցության վարչությունում մասնակցություն են ունեցել սոցիալական աջակցության տարածքային գործակալություններում /բաժիններում/ դեպքի վարման շրջանակներում իրականացվող աշխատանքներին, մասնակցել կազմակերպվող կլոր-սեղան քննարկումներին, իրենց իրավասությունների շրջանակում համագործակցել Երևանի քաղաքապետարանի համապատասխան ստորաբաժանումների աշխատակիցների հետ:

«Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ում ուսանողները ծանոթացել են և մասնակցություն ունեցել սոցիալական պաշտպանության ոլորտի հիմնախնդիրների /կենսաթոշակային ապահովության, բնակչության զբաղվածության կարգավորման, աշխատանքի և աշխատանքի վարձատրության, մասնագիտական կողմնորոշման, միգրացիայի ու ժողովրդագրության, ընտանիքի, կանանց և երեխաների հիմնախնդիրների, հաշմանդամություն ունեցող անձանց և տարեցների հիմնախնդիրների, սոցիալական աջակցության, ընտանիքների անապահովության վիճակագրական գնահատման և այլն/ վերաբերյալ գիտական, կիրառական հետազոտությունների իրականացմանն ու լուծումների առաջադրմանը, սոցիալական աջակցության տարածքային գործակալություններում /բաժիններում/ դեպքի վարման շրջանակներում իրականացվող աշխատանքներին: Պրակտիկան անցնող ուսանողներից 4 այս պահին ներգրավվել են նաև մասնագիտական կամավորական աշխատանքին:

Ուսանողների երրորդ խումբը ծանոթացել և մասնակցություն է ունեցել երեխաների սոցիալական հոգածության կենտրոնում մատուցվող բազմագործառույթ ծառայություններին՝ սոցիալ-հոգեբանական, իրավաբանական, բժշկական, մանկավարժական խորհրդատվություն և այլն, որոնք ուղղված են 6-18 տարեկան կյանքի դժվարին իրավիճակում հայտնված՝

առանց ծնողական խնամքի մնացած, ծնողների խնամքից զրկվելու վտանգի տակ գտնվող, աճի և զարգացման համար անբարենպաստ և վտանգավոր կենսապայմաններում գտնվող երեխաների պաշտպանությանը, ուսանողները մասնակցել են նաև սոցիալական դեպքի վարման շրջանակներում իրականացվող աշխատանքներին:

«ՍՕՍ մանկական գյուղեր» ՀԲՀ-ում ուսումնական պրակտիկա անցնող ուսանողներից 3-ը մեծապես ներգրավվել են աշխատանքային գործունեության մեջ և սովորել են փաստաթղթերի լրացման կարգը, ինչպես նաև առաջնային խորհրդատվություն անցկացնել կենտրոնի շահառուների ծնողների, այլ կառույցների մասնագետների հետ:

«Երևան իմ սեր» ՀԲՀ-ում պրակտիկա անցած ուսանողներին հնարավորություն տրվեց ներգրավվել անհատական դեպքերի վարմանը, և առաջարկություն ստացան աշխատանքային գործունեությունը շարունակել որպես կամավոր:

Ø Առկա ուսուցման մագիստրատուրայի 2018-2019 ուս. տարվա 2-րդ կիսամյակի սոցիալական աշխատանք մասնագիտության 1-ին կուրսի 7 ուսանողներ անցել են մասնագիտական պրակտիկա Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտում:

Պրակտիկայի ընթացքում ուսանողները ծանոթացել են ՀՀ ԱՍՀ նախարարության և Ազգային ինստիտուտի կառուցվածքի, իրականացվող գործառույթների հետ, ինչպես նաև 2018 թվականին Ազգային ինստիտուտի կողմից իրականացվող հետևյալ հետազոտություններին.

- Աշխատաշուկայի առաջարկի և պահանջարկի ուսումնասիրություն,
- Նպաստառու ընտանիքների կյանքի որակի ուսումնասիրություն:

Ուսանողները մանրամասն ծանոթացել են այդ հետազոտությունների անցկացման մեթոդաբանությանը և արդեն իսկ մշակված գործիքակազմին, միաժամանակ մասնակցել են նաև Ազգային ինստիտուի մասնագետների կողմից հետազոտությունների շրջանակներում կատարվող վերլուծություններին:

Ø Առկա ուսուցման բակալավրիատի 2019-2020 ուս. տարվա 1-ին կիսամյակի սոցիոլոգիա մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողների ուսումնական պրակտիկան կազմակերպվում է ՀՊՄՀ-ի Կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչությունում, Հայաստանի գործատուների հանրապետական միությունում և Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտում:

Ուսումնական պրակտիկայի բուն աշխատանքային փուլում, աշխատանքային պլանի ժամանակացույցին համապատասխան, կազմակերպվել և իրականացվել են սոցիոլոգիական հետազոտություններ հետևյալ թեմաներով՝

§ Սովորողների մասնագիտության ընտրության հիմնախնդիրները /ՀՊՄՀ-ի կրթության, հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի օրինակով/,

§ ՀՊՄՀ-ի ավարտական կուրսերի սովորողների աշխատանքի տեղավորման հնարավորությունները

§ ՀՊՄՀ-ի ուսանողների բավարարվածության մակարդակը կրթական ծրագրից;

§ ՀՊՄՀ-ի ուսանողների բավարարվածության մակարդակը ուսումնական գործընթացից;

§ 2019-2020 ուս. տարվա առաջին կուրսի ուսանողների ՀՊՄՀ ընդունվելու դրդապատճառները;

- Սոցիոլոգիա մասնագիտության զարգացման հեռանկարները ՀՀ-ում /բուհ- աշխատաշուկա կապի սոցիոլոգիական վերլուծություն/;

- ՀՊՄՀ-ի ուսանողների ակնկալիքներն ու սպասելիքները Թավշյա հեղափոխությունից /ընտանիք, կրթություն և աշխատանք/;

| և կիրառական հոգեբանության ամբիոնների ՊԴԱ թափուր պաշտոնների համար: Արդյունքում հոգեբանության ամբիոնում դոցենտի թափուր պաշտոններում մրցույթով անցել են 6 գիտությունների թեկնածու, դոցենտներ, 3 ասիստենտներ: Կիրառական հոգեբանության ամբիոնում հոգեբանական գիտությունների 5 թեկնածու, դոցենտներ և 1 ասիստենտ: Դասախոսական կազմի ընտրության համար ուղենիշ են հանդիսացել ՀՊՄՀ ռազմավարությունը, ֆակուլտետի ռազմավարական ծրագրի գործողությունների կատարման պլանը, ՄԿԾ-ի նպատակները: Ֆակուլտետը և ամբիոնները յուրաքանչյուր մասնագետի ներգրավման համար քննարկման են ենթարկում թեկնածուների բազային կրթությունը, աշխատանքային փորձը (ոլորտի)՝ իրականացնելով որակական գնահատում, հաշվի առնելով նաև ՄԿԾ-ի կարիքներն ու նպատակները, հավակնորդի կարողությունների համապատասխանությունը մասնագիտության կրթական ծրագրերի սահմաններում շնորհվող որակավորումներին:<br><br>Ֆակուլտետի կրթական ծրագրերի պատասխանատու ամբիոնների ՊԴԱ գերակշիռ մասն ունի գիտական աստիճան: Մասնավորապես, **հոգեբանության ամբիոնում** մասնագիտական գործունեություն են իրականացնում հոգեբանական գիտությունների 3 դոկտոր, 19 թեկնածու և 9 դասախոս: Ամբիոնը համալրվել է նաև երիտասարդ մասնագետներով, որոնք պատրաստվում են պաշտպանել թեկնածուական թեզ: **Կիրառական հոգեբանության** ամբիոնում մասնագիտական գործունեություն են իրականացնում հոգեբանական գիտությունների 4 դոկտոր, 15 թեկնածու և 2 դասախոս: **Սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոնն** այս առումով ուներ որոշակի խնդիրներ, որոնք հաշվետու ժամանակահատվածում լուծվել են գիտական աստիճան ունեցող, կոչում ունեցող մասնագետներ հրավիրելու միջոցով: ՊԴԱ կազմում ընդգրկված են սոցիոլոգիական գիտությունների 2 դոկտոր, 2 թեկնածու, փիլիսոփայական գիտությունների 2, տեխնիկական գիտությունների 3 թեկնածուներ, 7 դասախոս: Նախատեսվում է ամբիոնը համալրել նաև սոցիոլոգիական գիտությունների 1 թեկնածուով և 1 դասախոսով:<br><br>Ամբիոնները համալրվել են նաև երիտասարդ մասնագետներով, որոնք պատրաստվում են պաշտպանել թեկնածուական թեզեր: Իրականացվում են նաև ամբիոնային հաստիքային հիմնական ՊԴԱ կազմի մասնագիտական աճին ուղղված աշխատանքներ/վերապատրաստումներ, սեմինարներ, վարպետաց դասեր/:<br><br>Ֆակուլտետի ՊԴԱ հիմնական կազմը ամբողջովին ներգարվված է ամբիոնների գերակա գիտական ուղղությունների շրջանակներում իրականացվող հետազոտություններում:Հոգեբանության և Կիրառական հոգեբանության ամբիոնների պրոֆեսորադասախոսական կազմից 4-ը ներգրավված են Գիտության պետական կոմիտեի դրամաշնորհային ծրագրերում:<br><br>Ֆակուլտետի ՊԴԱ կազմում ներգրավված են նաև գործատուներ, ոլորտի լավագույն պրակտիկ մասնագետներ, ինչը միտված է ֆակուլտետ-գործատու համագործակցության ընդլայնմանը, ուսանողների ուսումնական գործընթացի, մասնավորապես պրակտիկաների կազմակերպման, տեսականի և գործնականի համադրման, ուսանողների հետագա աշխատանքային գործունեության և մասնագիտական կայացման գործընթացների արդյունավետության ապահովմանը: |

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

| Ֆակուլտետը հաշվետու տարում իրականացրել է հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող ռազմավարություն: |
|---|
| Վերլուծել հաշվետու տարում ֆակուլտետում հետազոտական ոլորտում հետաքրքրությունների և հավակնությունների ռազմավարության արդյունավետությունը և արդիականությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:<br>Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի հետազոտական ոլորտի հետաքրքրություններն ու հավակնություններն համահունչ են 2016-2020 թվականների |

ռազմավարական ծրագրի նպատակներին ու դրույթներին: 2019 թվականի գործողությունների պլանով նախատեսվել և իրականացվել են հետևյալ քայլերը:

Ստեղծվել են համալսարանի առաքելությունից բխող գիտական դպրոցներ (հոգեբանության որոշակի գիտական ուղղության կամ թեմա զարգացնող գիտական ներում): Կիրառական հոգեբանության ամբիոնում հիմք է դրվել <<Հոգեբանական հիմնախնդիրներ. բնութագրերը, դասակարգման և ախտորոշման սկզբունքները>> թեմայի ուղղությամբ հետազոտական աշխատանքներին:

Գիտական թեմաներն ընտրվել են՝ ելնելով պետության, հասարակության և բուհի շահերից՝ հիմք ընդունելով արդիականության և շուկայի պահանջները, հնարավորության սահմաններում պահպանելով հաջորդականության և փոխլրացման սկզբունքները:

Ֆակուլտետը և ամբիոնները աջակցել են միջազգային և հանրապետական գիտական ծրագրերին ՊԴԱ-ի մասնակցությանը, ներգրավել երիտասարդ գիտնականներին, կամուրջ ստեղծել ավագ և երիտասարդ սերունդների միջև: Խրախուսվել են պետական և ոչ պետական կազմակերպությունների հետ համատեղ հետազոտական ծրագրեր իրականացնելու նախաձեռնությունները, ՊԴԱ-ի՝ տարբեր դրամաշնորհներին մասնակցությունը:

2019 թվականի ապրիլի 21-23-ը Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի, մասնավորապես Կիրառական հոգեբանության ամբիոնի նախաձեռնությամբ տեղի է ունեցել «Հոգեբանական պրոբլեմներ. բնութագրերը, դասակարգման և ախտորոշման սկզբունքները» թեմայով միջազգային գիտաժողով: Գիտաժողովի նպատակն էր բացահայտել հոգեբանական խնդիրների էությունը, դրանց ախտորոշման հոգեբանական առանձնահատկությունները, սահմանազատել հոգեբանական և ոչ հոգեբանական պրոբլեմները, առանձնացնել հոգեբանական պրոբլեմների տեսակները, մակարդակները, դրսևորման առանձնահատկությունները, մշակել հոգեբանական պրոբլեմների դասակարգման մեխանիզմները և չափանիշները: Գիտաժողովի շրջանակներում կազմակերպվել է նաև կլոր սեղան-քննարկում միջազգային աշխատանքային խումբ ստեղծելու նպատակով, որը կկազմակերպի և կվերահսկի հոգեբանական պրոբլեմների դասակարգման և ախտորոշման համակարգի ստեղծման աշխատանքները: Գիտաժողովին մասնակցել են մի շարք երկրների հոգեբանական ոլորտի կարկառուն ներկայացուցիչներ, մասնավորապես՝

1. **Դ.Ա.ԼԵՈՆՏԵՎ** (ԱՅՅ ՏԲԴ անձի դրական հոգեբանության և մոտիվացիայի միջազգային լաբորատորիայի ղեկավար, հոգեբանության ֆակուլտետի անձի հոգեբանության ամբիոնի պրոֆեսոր, Մ.Վ. Լոմոնոսովի անվան Մոսկվայի պետական համալսարան, Ռուսաստանի Դաշնություն, հ.գ.դ.).
2. **Վ.Դ.ՄԵՆԴԵԼԵՎԻՉ** (Յոգեկան առողջության խնդրի ուսումնասիրությունների ինստիտուտի տնօրեն, Կազան, Ռուսաստանի Դաշնություն, հ.գ.դ., պրոֆեսոր).
3. **Դ. Ջ. ԿՈՒԿ** (Բերգենի համալսարանի պրոֆեսոր, հոգեբանության և իրավունքի եվրոպական ասոցիացիայի նախկին նախագահ, Միացյալ Թագավորություն).
4. **Վ.ՄԱԶԻԼՈՎ** (Յարոսլավլի Կ.Դ.Ուշինսկու անվան ՊՄՅ-ի ընդհանուր և սոցիալական հոգեբանության ամբիոնի վարիչ, Ռուսաստանի Դաշնություն, հ.գ.դ.).
5. **Վ.ԼԱԲՈՒՆՍԿԱՅԱ** (Յարավային դաշնային համալսարանի սոցիալական հոգեբանության ամբիոնի վարիչ, Ռուսաստանի Դաշնություն).
6. **Ա.ՔՈՉԱՐՅԱՆ** (Վ.Ն.Կարազինի անվան Խարկովի ազգային համալսարանի հոգեբանական խորհրդատվության և հոգեթերապիայի ամբիոնի վարիչ, Ուկրաինա).
7. **Ն.ՄԱՔՍԻՄՈՎԱ** (հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Տարաս Շևչենկոյի անվան Կիևի ազգային համալսարան, Ուկրաինա).
8. **Ա.ՆԱԿՈՆԵՉՆԱՅԱ** (Արդյունավետ պերինատալ հոգեբանության և հոգեսոմատիկայի ինստիտուտի ղեկավար, հոգեսոմատիկայի և վերարտադրողական պերինատալ հոգեբանության ուկրաինական ասոցիացիայի նախագահ, Ուկրաինա).
9. **Ռ.Վ.ԵՐՇՈՎԱ** (հոգեբանության ամբիոնի վարիչ, պետական սոցիալ-հումանիտար համալսարան, Ռուսաստանի Դաշնություն).

Ֆակուլտետում խթանվել է ամբիոնների պրոֆեսորադասախոսական կազմի աշխատությունների հրատարակման ակտիվությունը հեղինակավոր, նաև միջազգային վարկանիշային ամսագրերում, հոգեբանական մասնագիտական գրականության թարգմանության և դասագրքաստեղծման գործունեությունը, գիտական արդիական մենագրությունների հրապարակումը:

Ամբիոնների ՊԴԱ կազմը տպագրվել է միջազգային բարձր վարկանիշ և ինդեքս ունեցող պարբերականներում: Ֆակուլտետը նպաստել է ՊԴԱ-ի՝ արտասահմանյան բուհերում և գիտական կազմակերպություններում վերապատրաստմանը: Մասնավորապես Կիրառական հոգեբանության ամբիոնի դոցենտ, հ.գ.թ. Մարիաննա Ավետիսյանը Erasmus+ ծրագրի շրջանակներում դասախոսություններով հանդես է եկել Ռումինիայի Սպիրու Հարեթ համալսարանում:

| | | | |
|---|---|---|---|
| Ֆակուլտետի գործունեությունը հետազոտական գործունեության միջազգայնացման ուղղությամբ: | | | |
| ԱՊՀ երկրներում գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների թիվ | | | |
| | Ամսագիրը (երկիրը) | Վարկանիշը | Հրապարակումների թիվ |
| 1 | «Научная мысль» | РИНЦ | 2 |
| 2 | Молодежь и молодежная политика: новые смыслы и практики.Серия «Демография. Социология. Экономика». Том 5, No 1 / Под редакцией чл.-корр. РАН Рязанцева С.В., д.с.н., Ростовской Т.К., д.с.н.,Зубок Ю.А. – М.: Изд-во «Экон-информ», | | 1 |
| 3 | Сборник научных статей Всероссийской научно-практичес кой конференции с международным участием/ отв. ред. Пыж В.В. СПб.: Издательско-поли графический центр «Политех» | | 1 |
| 4 | Социология и право | | 1 |
| 5 | Сборник материалов II Международная научно-практическа я конференция: «ПРОБЛЕМЫ РАЗВИТИЯ ЛИЧНОСТИ В УСЛОВИЯХ ГЛОБАЛИЗАЦИИ: ПСИХОЛОГО-ПЕДАГОГИЧЕСКИЕ АСПЕКТЫ», РАУ | РИНЦ | 12 |
| Օտարերկրյա միջազգային գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների ցանկը | | | |
| | Ամսագիրը (երկիրը) | Վարկանիշը | Հրապարակումների թիվ |

| | | | |
|---|---|---|---|
| 1 | Chemical Engineering of Polymers published by Apple Academic Press, USA | | 1 |
| 2 | “PROBLEMS OF EDUCATION IN THE 21st CENTURY” | | 1 |
| 3 | Evolution in Polymer Technology Journal | | 1 |
| 4 | Marketing and Management of Innovations | | 1 |
| 5 | WISDOM | SCOPUS | 1 |
| ՀՀ-ում գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների ցանկը | | | |
| | Ամսագիրը | Վարկանիշը | Հրապարակումների թիվ |
| 1 | ‚Հայկական բանակ՛ ռազմագիտական հանդես | | 1 |
| 2 | <<Կանառ>> գիտական պարբերական Գիտությունների ազգային ակադեմիայի Գիտակրթական միջազգային կենտրոն | | 3 |
| 3 | Ճախմատ. գիտություն եվ կրթություն գիտամեթոդական ամսագիր | | 3 |
| 4 | Вестник Российско-Армянского Университета гуманитарные и общественные науки Издательство РАУ | | 1 |
| 5 | Արդի հոգեբանություն. ԵՊՀ Գիտական հանդես | | 1 |
| 6 | Միջազգային գիտաժողովի նյութեր, ԵԲՀ | | 1 |
| 7 | Issues of Pedagogy and Psychology | | 1 |
| 8 | ԵՊՀ, «ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ» VII Միջազգային գիտաժողով՝ նվիրված ԵՊՀ-ի հարյուրամյակին Հոկտեմբերի 11-13 | | 2 |

| | | | |
|---|---|---|---|
| 9 | International Conference "Current State and Development Trends of Chess Education" | | 4 |
| 10 | Լրաբեր հասարակական գիտությունների ՀՀ ԳԱԱ | | 1 |
| 11 | Հոգեբանական հիմնախնդիրներ.բնութագրերը, դասակարգման և ախտորոշման սկզբունքները: ՄԻջազգային գիտաժողովի նյութեր.-Եր.: Լիմուշ հրատ., 2019 | | 31 |

Վերլուծել ֆակուլտետի հետազոտական գործունեության միջազգայնացման աշխատանքները հաշվետու տարում:

2019 թվականի ապրիլի 21-23-ը Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի, մասնավորապես Կիրառական հոգեբանության ամբիոնի նախաձեռնությամբ տեղի է ունեցել «Հոգեբանական պրոբլեմներ. բնութագրերը, դասակարգման և ախտորոշման սկզբունքները» թեմայով միջազգային գիտաժողով: Գիտաժողովի նպատակն էր բացահայտել հոգեբանական խնդիրների էությունը, դրանց ախտորոշման հոգեբանական առանձնահատկությունները, սահմանազատել հոգեբանական և ոչ հոգեբանական պրոբլեմները, առանձնացնել հոգեբանական պրոբլեմների տեսակները, մակարդակները, դրսևորման առանձնահատկությունները, մշակել հոգեբանական պրոբլեմների դասակարգման մեխանիզմները և չափանիշները: Գիտաժողովի շրջանակներում կազմակերպվել է նաև կլոր սեղան-քննարկում միջազգային աշխատանքային խումբ ստեղծելու նպատակով, որը կկազմակերպի և կվերահսկի հոգեբանական պրոբլեմների դասակարգման և ախտորոշման համակարգի ստեղծման աշխատանքները: Գիտաժողովին մասնակցել են մի շարք երկրների հոգեբանական ոլորտի կարկառուն ներկայացուցիչներ՝ ՌԴ, Ուկրաինա, Իսրայել, Միացյալ Թագավորություն, Լեհաստան և այլն:

Ֆակուլտետի աշխատանքները հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման ուղղությամբ:

Հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցվածության վերլուծություն: Հետազոտական գործունեությունը և ուսումնական գործընթացի փոխկապակցումն արտահայտող հիմքեր (գիտական աշխատանքներ ուսանողների մասնակցությամբ, հետազոտությունների շնորհիվ վերանայված ծրագրեր, այլ աշխատանքներ): (տեքստը այստեղ)

Ֆակուլտետում ՊԴԱ կազմի կողմից իրականացվում է ուսանողների հետազոտական աշխատանքների ղեկավարում և խորհրդատվություն: Համատեղ հետազոտական աշխատանքի արդյունքները տպագրվել են կամ հանձնվել են տպագրության /Տես՝ 4-րդ կետ/:

Հոգեբանության ամբիոնի դոցենտ հ.գ.թ. Լիդա Արամյանի հետազոտական աշխատանքի արդյունքները ներդրվել են մագիստրոսական կրթության Ընտրովի դասընթացներում/ Կոնֆլիկտի կառավարման տեխնոլոգիա/:

Կիրառական հոգեբանության ամբիոնը վերանայվել են ուսումնամեթոդական փաթեթները, հրատարակված դասագրքերի հիման վրա կազմվել են առարկաների նոր փաթեթներ: Օրինակ, ամբիոնի պրոֆեսոր Սուսաննա Փիլոսյանը հրատարակել է ,,Ընդհանուր հոգեբանություն՛՛, ,,Զոոհոգեբանություն և մարդաբանություն՛՛ ձեռնարկները, որոնք դասընթացների ձևով ներկայացվում են ուսանողներին:

Սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոնի աշխատակիցների իրականացված հետազոտությունների արդյունքները ներառվում են դասավանդվող առարկաների բովանդակության մեջ՝ Գ.Մկոյան, Մշակույթի սոցիոլոգիա առարկայի դասընթացի շրջանակներում ընդգրկել է իր կողմից իրականացված հետազոտությունների արդյունքները:

Ֆակուլտետը արձագանքել է նաև ղեկավարության կողմից կոնկրետ շեշտադրված բուհի հիմնախնդիրների վերաբերյալ և շահերից ելնող ավարտական աշխատանքների և մագիստրոսական ատենախոսությունների թեմաների ընտրությանը: Հոգեբանության ամբիոնի քննարկումների արդյունքում առաջարկվել են հետևյալ թեմաները՝

| |
|---|
| 1. Ապագա ուսուցիչների մանկավարժական պրակտիկայի հոգեբանական ուղեկցման հիմնախնդիրները /ղեկ.Կաթունյան Արաքսյա/<br>2. Ապագա հոգեբանների մանկավարժական պրակտիկայի կազմակերպման հիմնախնդիրները երեխայի աջակցման կենտրոններում/ ղեկավար՝ Լիլիթ Վարդանյան/:<br>3. Մանկավարժական պրակտիկայի ընթացքում ապագա հոգեբանի մասնագիտական դիրքորոշման ձևավորման բաղադրիչների հոգեբանական վերլուծություն /ՀՊՄՀ օրինակով/ /ղեկավար՝ Սոնա Մակիչյան/ |

VII. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Վերլուծել առկա մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայրի՝ լսարանների, լաբորատորիաների, ուսումնական կաբինետների, արվեստանոցների, արհեստանոցների արդյունավետությունը՝ նշելով շահակիցների բավարարվածության աստիճանը:

Ֆակուլտետում առկա մասնագիտությունների կրթական ծրագրերը իրականացվում են անհրաժեշտ տեխնիկապես ապահոված լսարաններում: Ֆակուլտետը ունի 1 լաբորատորիա, որը միտված է ավելի արդյունավետ դարձնելու ուսանողների գիտելիքների փոխանցման գործընթացը:

Ֆակուլտետը տեղակայված է բուհի հինգ ուսումնական շենքերից Խանջյան 5 հասցեի բարձրահարկ մասնաշենքի 7-րդ հարկում:Կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր է ծառայում 2-րդ հարկից 5 լսարան, 3-րդ հարկից 3 լսարան, 4-րդ հարկից 2 լսարան, 5-րդ հարկից 2 լսարան, 6-րդ հարկից 2 լսարան, 7-րդ հարկի 9 լսարան, 8-րդ հարկից 3 լսարան, 9-րդ հարկից 8 լսարանային ֆոնդերը որոշակի ժամերի/ 1-ին և 2-րդ հերթափոխեր/: Գործնական պարապունքներ են կազմակերպվում նաև շահառու հաստատություններում:

| **Հարկ** | **Լսարանային ֆոնդեր համապատասխան ապահովվածությամբ**<br>**/ Պ-պրոյեկտոր, Է- էլեկտրոնային հագեցվածություն/** | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| **2-րդ հարկ** | 203 լս. | 204լս. | 205լս. | 206լս. | 207լս. | 208լս. | 209լս. | 212 լս. | |
| **5-րդ հարկ** | 501լս. | 516 լս. | | | | | | | |
| **6-րդ հարկ** | 607 լս. | 610 լս. Պ | | | | | | | |
| **7-րդ հարկ** | 701 լաբ. Պ | 704 լս. Պ | 705լս. Է | 706լս. Պ | 707 լս. Է | 709լս. Է | 713լս. Պ | 715լս. Է | 716 լս. Պ |
| **8-րդ հարկ** | 804լս. | 808լս. | 812լս. | 815լս. Պ | | | | | |
| **9-րդ հարկ** | 903 լս. Պ | 905լս. Է | 908լս. Է | 911լս. Պ | 915լս. | 916լս. | 907 լս. | 912 լս. | |

VIII. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

| Հաշվետու տարում ֆակուլտետի հաշվետվողականության գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանը, հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի մեխանիզմներ: |
|---|
| Հաշվետու ժամանակահատվածում ֆակուլտետի հասարակությանը տրամադրված ծառայություններն են ՝<br><br>Ամբիոնի կողմից իրականացվել են հետևյալ միջոցառումները.<br><br>● Ամբիոնների դասախոսների կողմից Սոցիալական մանկավարժություն , Հոգեբանություն մասնագիտությունների և 2-րդ և 3-րդ կուրսի ուսանողները բարեգործական այցով եղել են Մարի Իզմիրլյանի անվան մանկատանը, որտեղ կազմակերպել են «Մենք բոլորս ընկերներ ենք» թեմայով ցերեկույթը և մանկատան գրադարանին նվիրել հայերեն և ռուսերեն դպրոցական ծրագրային գրականություն: /33ուսանող/<br><br>Ինչպես նաև ֆակուլտետի տարբեր ամբիոնների կողմից կազմակերպվել են ներքոհիշյալ միջոցառումները.<br><br>● Սոցիալական պաշտպանության դերը կայուն զարգացման օրակարգում<br><br>● Սոցիալական ձեռներեցության դպրոց, պարբերական դասընթացներ<br><br>● Սոցիալական խորհրդատվության տրամադրում<br><br>● Լսողության խանգարումներ ունեցող երեխաների կրթահամալիր<br><br>● <<Մանկական վախերը և դրանց հաղթահարումը>> թեմայով սեմինար Վանաձորում<br><br>● <<Մանկական վախերը և դրանց հաղթահարումը>> թեմայով սեմինար Գյումրիում, Երևանում<br><br>● Այցելություն մտավոր հետամնացություն ունեցող երեխաների թիվ 11 հատուկ դպրոց ԿՀՍ ֆակուլտետի Հոգեբանության բաժնի ուսանողների հետ միասին<br><br>● Երևանի թ.104 դպրոց Դեռահասների՝ ծխելու նկատմամբ հակվածությունը և վերաբերմունքը բացահայտող հետազոտություն<br><br>● Երևանի թ.131 դպրոց Տարրական դասարանների աշակերտերի հետ դպրոցական հարմարմանն ուղղված աշխատանքներ<br><br>● Երևանի թ. 171 դպրոց Տարրական դասարանների ուսուցիչների հետ սեմինարներ՝ աշակերտների հարմարման և ուսումնական դժվարությունների հարցերի շուրջ<br><br>● Երևանի թ. 171 դպրոց Խորհրդատվական և լուսավորչական աշխատանք՝ ծնող-ուսուցիչ հարաբերությունների բարելավմանն ուղղված |

| |
|---|
| • Թիվ 11 պոլիկլինիկա Սեմինար ,, Հեքիաթաթերապիայի կիրառումը մանկական հոգեբանական խնդիրների հաղթահաման դեպքերում/լուսավորչական/<br><br>Ուսանողների կողմից կազմակերպվել են արտահամալսարանական միջոցառումներ: Մարտունի գյուղում ճամբար:<br><br>Հաշվետու ժամանակահատվածում ֆակուլտետը ակտիվորեն մասնակցում են Կոտայքի մարզի Հանքավանի և Ծաղկաձորի հանգստյան և ամառային ճանբարների կամավորական աշխատանքներին :<br><br>Շարումնակվում են համագործակցությունը Արցախի պետական համալսարանի և ֆակուլտետի միջև: |

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

| Ֆակուլտետի համագործակցությունը տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ հաշվետու տարում: |
|---|
| Ներկայացնել արտաքին կապերի և միջազգայնացման գործընթացներում ֆակուլտետի միջոցառումները և հիմնական ձեռքբերումները: Վերլուծել համագործակցության արդյունավետությունը: |
| Վերոնշյալ ուղղություններով Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետում իրականացվել են հետևյալ աշխատանքները:<br><br>Մայիսի 3-9-ը Erasmus+ ծրագրի շրջանակներում Մանկավարժական համալսարանում էին Ռումինիայի Բրաշովի Տրանսիլվանիայի համալսարանի հոգեբանության և կրթական գիտությունների ֆակուլտետի դեկան Մարիելլա Պավալակեն և պրոֆեսոր Մարչելա Ռոդիկա Լուկան:<br><br>Այցի ընթացքում գործընկերները հանդիպումներ ունեցան ՀՊՄՀ-ի Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկանի, տեղակալների, պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների հետ, քննարկեցին համագործակցության հնարավոր ուղիները:<br><br>Պայմանավորվածություններ ձեռք բերվեցին Ռումինիայում և Հայաստանում իրականացնել մանկավարժական, աշխատանքային և ժամանակակից հոգեբանական մի շարք հիմնախնդիրների շուրջ համատեղ հետազոտական աշխատանքներ: Այդ նպատակով Հոգեբանության ամբիոնի ՊԴԱ կազմի ներկայացուցիչներ Ս.Մակիչյանը, Մ.Քելոյանը և Լ.Քուրքչյանը ավարտական և մագիստրոսական կրթության ավարտական կուրսերի ուսանողների հետ արդեն իսկ մշակել են սկսնակ ուսուցիչների մասնագիտական, սոցիալ-հոգեբանական հարմարման հիմնախնդիրների ուսումնասիրությանն ուղղված ծրագրեր, որոնց շրջանակներում համատեղ հետազոտություններ կիրականացվեն Հայաստանի և Ռումինիայի դպրոցներում:<br><br>Քննարկվեցին նաև դասավանդման նպատակով փոխադարձ այցելությունների անհրաժեշտությունն ու հնարավոր թեմատիկան:<br><br>Բրաշովի համալսարանի պրոֆեսոր Մարչելա Լուկան հանդես եկավ սոցիալականացման, ձեռնարկատիրական, անձնավորության և կրթության, շրջանավարտի աշխատանքային և մասնագիտական ներգրավվածության թեմաներով դասախոսություններով, ինչպես նաև ներկայացրեց այդ ոլորտների վերջին ուսումնասիրությունները:<br><br>Նշենք, որ Տրանսիլվանիայի Բրաշովի համալսարանի հետ Մանկավարժական համալսարանի համագործակցությունը մեկնարկել է 2016 թվականից Էրազմուս+ կրեդիտային շարժունության |

ծրագրի շրջանակներում: Ուսանողների փոխանակման ծրագրի շրջանակներում հոգեբանության բաժնի 1 ուսանող 5 ամիս սովորել է Բրաշովի համալսարանում, իսկ 2018-ին նույն համալսարանում վերապատրաստվել է Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի գիտության և միջազգային համագործակցության գծով փոխդեկան Սոնա Մակիչյանը:

2019 թվականի ապրիլին Կիրառական հոգեբանության ամբիոնի դոցենտ Մարիաննա Ավետիսյանը Erasmus+ ծրագրի շևջանակներում դասախոսություններով հանդես է եկել Ռումինիայի Սպիրու Հարեթ համալսարանում :

2019 թվականի ապրիլի 21-23-ը Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի, մասնավորապես Կիրառական հոգեբանության ամբիոնի նախաձեռնությամբ տեղի է ունեցել «Հոգեբանական պրոբլեմներ. բնութագրերը, դասակարգման և ախտորոշման սկզբունքները» թեմայով միջազգային գիտաժողով: Գիտաժողովի նպատակն էր բացահայտել հոգեբանական խնդիրների էությունը, դրանց ախտորոշման հոգեբանական առանձնահատկությունները, սահմանազատել հոգեբանական և ոչ հոգեբանական պրոբլեմները, առանձնացնել հոգեբանական պրոբլեմների տեսակները, մակարդակները, դրսևորման առանձնահատկությունները, մշակել հոգեբանական պրոբլեմների դասակարգման մեխանիզմները և չափանիշները: Գիտաժողովի շրջանակներում կազմակերպվել է նաև կլոր սեղան-քննարկում միջազգային աշխատանքային խումբ ստեղծելու նպատակով, որը կկազմակերպի և կվերահսկի հոգեբանական պրոբլեմների դասակարգման և ախտորոշման համակարգի ստեղծման աշխատանքները: Գիտաժողովին մասնակցել են մի շարք երկրների հոգեբանական ոլորտի կարկառուն ներկայացուցիչներ՝ ՌԴ, Ուկրաինա, Իսրայել, Միացյալ Թագավորություն, Լեհաստան և այլն:
Միջազգային գիտաժողովին ներկա էին նաև ՌԴ Ռոստովի Դաշնային համալսարանի ներկայացուցիչները, որոնց հետ ձեռք բերված համաձայնությունների, ՀՊՄՀ միջազգային համագործակցության բաժնի և ֆակուլտետի համատեղ աշխատանքի արդյունքում հոգեբանություն մասնագիտության 3-րդ կուրսի 1 և 4-րդ կուրսի 2 ուսանողներ հնարավորություն ստացան 1 կիսամյակ կրթությունը շարունակել Ռոստովի Դաշնային համալսարանում:
Մագիստրոսական կրթության մասնագիտական պրակտիկաների արդյունավետության բարձրացման նպատակով համագործացություն է հաստատվել ՀՀ Ազգային Ժողովի, ՀՀ Արդարադատության նախարարության Քրեակատողական ծառայության, <<Նատալի ֆարմ>> ՍՊԸ-ի <<Աստղիկ>> բժշկական կենտրոնի հետ: Շարունակվում է համագործակցությունը Արթմեդ բժշկական կենտրոնի ,Սթրես՛ և ,Ապագա՛ հոգեբանական կենտրոնների, Հայ գործատուների միության հետ: Նշված համագործակցության շրջանակներում ուսանողները հնարավորություն են ստացել ձեռք բերել մասնագիտական գործնական կարողություններ ո հմտություններ:
Շարունակվել է համագործակցությունը նաև ՀՀ Քննչական կոմիտեի հետ: Մասնավորապես Կիրառական հոգեբանության ամբիոնի ՊԴԱ ներկայացուցիչները 2019 թ-ի ընթացքում իրականացրել են 6 դատահոգեբանական փորձաքննություն, ևս 2-ը դատարանների միջնորդությամբ:

Վերլուծել հաշվետու տարում ֆակուլտետի արտաքին կապերին և միջազգայնացմանը նպաստող աշխատանքները, ֆակուլտետի տարեկան գործողությունների ծրագիրը, դրանց արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումները /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Ըստ 2016-2020 թվականների զարգացման ռազմավարական ծրագրի Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի 2019 թվականի գործողությունների պլանով ընդհանուր առմամբ նախատեսված էին հետևյալ քայլերը.

1. Ընդլայնել միջազգային համագործակցության ուղղությունները Ֆակուլտետի զարգացման ծրագրին համահունչ:

2. Աջակցել ֆակուլտետի բոլոր ամբիոններին՝ ներգրավվելու միջազգային համագործակցության ծրագրերում:

3. Խթանել Ֆակուլտետի ուսանողների և գիտամանկավարժական կազմի մասնակցությունը միջազգային փոխանակման ծրագրերին, բարձրացնել ներգնա և արտագնա շարժունության ծրագրերում նրանց մասնակցությունը:

4. Նպաստել օտարերկրյա հրավիրված դասախոսների ֆակուլտետ պարբերական այցելություններին և ընդլայնել ամբիոնների կրթական ծրագրերում նրանց մասնակցության շրջանակները:

5. Խթանել ֆակուլտետի հետազոտական աշխատանքների միջազգայնացման գործընթացները, ապահովել ֆակուլտետի ներգրավումը Եվրոպական հետազոտական տարածքին:
6. Շարունակել խթանել ֆակուլտետի գիտական համագործակցությունը արտասահմանյան առաջատար համալսարանների և գիտական կենտրոնների հետ, համատեղ նախագծերի նախաձեռնումը ու իրականացումը երկկողմ պայմանագրերի, կոնսորցիումների և միջազգային ցանցերի շրջանակներում:
7. Իրականացնել հայաշատ երկրներից սփյուռքահայ դիմորդների ներհոսքը խթանող և ակտիվացնող աշխատանքներ:

Ֆակուլտետի կրթական ծրագրերի պատասխանատու ամբիոնների ՊԴԱ կազմի ներկայացուցիչներ Ա.Սարգսյանը, Գ.Ասատրյանը և ֆակուլտետի գիտության և միջազգային համագործակցության հարցերով դեկանի տեղակալ Ս.Մակիչյանը մասնակցել են մանկավարժական համալսարանում կազմակերպված Էրազմուս+ ծրագրի ամենամյա տեղեկատվական օրերի երկրորդ փուլին:

Ս.թ. սեպտեմբերի 26-ին Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի գիտության և միջազգային համագործակցության հարցերով դեկանի տեղակալ, հ.գ.թ., դոցենտ Սոնա Արտակի Մակիչյանը և ուսումնական հարցերով դեկանի տեղակալ, հ,գ,թ., դոցենտ Լիդա Ռազմիկի Արամյանը մասնակցել են “Computer Science and Information Technologies 2019” գիտաժողովի շրջանակներում կայանալիք «Scientometrics in Practice» աշխատաժողովին:

X. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

| Ներկայացնել և վերլուծել ֆակուլտետի որակի ապահովման ներքին համակարգի արդյունավետությունը: |
| --- |
| Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետում և ամբիոններում որակի ապահովման պատասխանատուների կողմից 2018-2019 ուսումնական տարեսկզբին կազմվել է միջոցառումների պլան /կցվում է/, ըստ որի կազմակերպվել են հետագա աշխատանքները:<br><br>Հաշվետու ժամանակահատվածով պայմանավորված՝ հունիս-հուլիս ամիսներից ֆակուլտետի պատասխանատուները, իսկ սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներից ամբիոնների որակի պատասխանատուները, ՊԴԱ ներկայացուցիչները և ուսանողները ընդգրկվել են մասնագիտական ուսումնական հաստատության ինստիտուցիոնալ կարողությունների ինքնագնահատման զեկույցի նախապատրաստական աշխատանքների իրականացման հանձնախմբերում:<br><br>Որակի ապահովման գործընթացների կառավարման շրջանակներում կազմակերպվել են ֆակուլտետային և ամբիոնային քննարկումներ ֆակուլտետի ենթակառուցվածքային ստորաբաժանումների /ամբիոնների/ գործունեության արդյունավետության բարձրացման ուղիների, Համալսարանի 2016-2020թթ զարգացման ռազմավարական ծրագրի 2018թ. ֆակուլտետի ԳՊ-ի քայլերի իրականացման ընթացքի վերաբերյալ:<br><br>Ֆակուլտետի ՊԴԱ-ի կողմից SS-ով հագեցած ժամանակակից ուսումնական և աշխատանքային միջավայրը արդյունավետ օգտագործելու խնդիրների վերհանման նպատակով իրականացվել են SS-ներով հագեցած լսարանային ֆոնդերում ՊԴԱ կողմից տեսական և գործնական /դասախոսություն և սեմինար/ պարապմունքների արդյունավետ կիրառման մշտադիտարկման արդյունքում վեր են հանվել, ամբիոնների և ֆակուլտետի նիստերում քննարկվել դրական և բացասական կողմերը /հիմք՝ ամբիոնների նիստերի քաղվածքները/: Ֆակուլտետին տրամադրված լսարանային ֆոնդերում՝ 5-րդ, 6-րդ, 7-րդ, 9-րդ հարկերում պարբերաբար ստուգվում է ռեսուրսների արդյունավետ կիրառումը: Խնդիր է մնում 2-րդ հարկի հատկացված լսարանային ֆոնդերը, որտեղ բացակայում են անբրաժեշտ SS ռեսուրսները, իսկ դեկանատից և ամբիոններից տրամադրվող տեխնիկան չի բավարարում: Հիշյալ լսարանային ֆոնդերը հիմնականում կիրառվում են լեզուների |

գործնական պարապմունքների ժամանակ և ՏՏ ռեսուրսների բացակայունը նվազեցնում է դասավանդման և ուսումնառության արդյունավետությունը:

Հաշվետու ժամանակահատվածում համալսարանի կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչության հանձնարարականով վերանայվել և ներդրվել են առկա և հեռակա ուսուցման համակարգերի մասնագիտական կրթական ծրագրերի բաղադրիչներ հանդիսացող մասնագրերը, ուսումնական պլանները, առարկայական նկարագրերը, որոնց ներդրման ընթացքը մշտադիտարկվել է 2018 թվականի սեպտեմբերից: Ֆակուլտետի և ամբիոնների որակի պատասխանատուները մասնակցել են վարչության կողմից կազմակերպված սեմինար-քննարկումներին: Կազմակերպվել են նաև ֆակուլտետային և ներամբիոնային քննարկումներ /հիմք՝ ֆակուլտետի և ամբիոնների արձանագրությունների քաղվածքենրը/:

Մշտադիտարկվել են դասավանդման, ուսումնառության և արդյունքների գնահատման միասնական չափանիշների գործարկման գործընթացը կրթական ծրագրերում:

Որպես շահակից կողմ ֆակուլտետի կրթական ծրագրերի մշակման հանձնախմբերում, ինչպես նաև ֆակուլտետային քննարկումներում ներգրավվել են ուսանողական համայնքի ներկայացուցիչներ: Գործընթացն առավել արդյունավետ կազմակերպվելու համար անց են կացվել տեղեկատվական և ուսուցողական հանդիպումներ:

Հոգեբանության ամբիոնում որակի ապահովման ուղղությամբ իրականացվել են հետևյալ աշխատանքները:

Հաշվետու ժամանակահատվածում ամբիոնում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

1. Որակի ապահովման գործընթացների կառավարման ընթացիկ հարցերի քննարկում /հիմքերը՝ 2018-2019 թթ.. որակի ապահովման գործընթացների Հոգեբանության ամբիոնի սեպտեմբերի 14-ի , 1-ին հանդիպման արձանագրություն/,
2. Բարելավվել են բակալավրի և մագիստրատուրայի ՄԿԾ-երը, վերանայվել են առարկայական նկարագրերը /հիմքերը՝ 2018-2019 թթ.. որակի ապահովման գործընթացների Հոգեբանության ամբիոնի Դեկտեմբեր 16 , 3-րդ հանդիպման արձանագրություն/,
3. Որակի ապահովման ամբիոնային պատասխանատուների վերապատրաստում, որոնք իրենց հերթին իրականացրել են ամբիոնի ՊԴԱ-ի վերապատրաստումներ.
4. Ամբիոնների ուսումնական գործունեության վերլուծություն, մասնավորապես Classroom հարթակում բարեփոխումների իրականացման առաջարկների վերլուծություն /հիմքերը՝ 2018-2019 թթ.. որակի ապահովման գործընթացների Հոգեբանության ամբիոնի հոկտեմբերի 5-ի , 2-րդ հանդիպման արձանագրություն/,
5. Ամբիոնի հետազոտական գործունեության վերլուծություն, մասնավորապես կուրսային, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների, չափանիշների, ժամկետների քննարկում և վերանայում հիմքերը՝ 2018-2019 թթ.. որակի ապահովման գործընթացների Հոգեբանության ամբիոնի սեպտեմբերի 14-ի , 1-ին հանդիպման արձանագրություն/:
6. Քննարկվել են ընտրովի դասընթացներում բարելավման և փոփոխությունների իրականացման անհրաժեշտությունը /հիմքերը՝ 2018-2019 թթ.. որակի ապահովման գործընթացների Հոգեբանության ամբիոնի Ապրիլի 18 , 4-րդ հանդիպման արձանագրություն/,
7. Իրականացվել է ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի կարիքների վերհանում, ինչի արդյունքում պարզվել է ՊԴԱ անձնակազմի կողմից անգլերեն լեզվի ուսուցման կազմակերպման անհրաժեշտություն /հիմքերը՝ 2018-2019 թթ.. որակի ապահովման գործընթացների Հոգեբանության ամբիոնի Ապրիլի 18 , 4-րդ հանդիպման արձանագրություն/,

8. Հաշվետու ժամանակահատվածում վերանայվել է բակալավրիական, մագիստրոսական կրթության ՄԿԾ-ների ուսումնական պլանները /միայն 1-ին կուրսեր/, առարկայական նոր նկարագրերը, որոնցում զգալի ուշադրություն է դարձվել ակնկալվող կրթական վերջնարդյունքների համադրմանը որակավորումների ազգային շրջանակին, ինչպես նաև դասավանդման ու ուսումնառության մեթոդների և գնահատման մեթոդների համապատասխանեցմանը /հիմքերը՝ 2018-2019 թթ.. որակի ապահովման գործընթացների Հոգեբանության ամբիոնի Դեկտեմբեր 7 , 2-րդ հանդիպման արձանագրություն/:

9. Մագիստրատուրայի դասընթացների գնահատում. 2018-2019 ուսումնական տարվա վերջում իրականացրվել են առաջին և երկրորդ կուրսերի դասընթացների գնահատում ուսանողների կողմից.

Գնահատման բաղադրիչներն են.

1. Դասընթացի կրթական վերջնարդյունքների ձեռքբերման աստիճանը,
2. Դասընթացի բովանդակության համապատասխանությունը կրթական վերջնարդյունք ձևավորմանը,
3. ԴՎ-ի համապատասխանությունը ԿԵԱ ձևավորմանը:

Ստացված արդյունքները ներկայացված են ստորև գծապատկերների ձևով.

Գծապատկեր 1.




<u>*1*-ին կուրսի դասընթացների ընդհանրական վերլուծություն</u>

Գծապատկեր 2.




2-րդ կուրսի դասընթացների ընդհանրական վերլուծություն

Կրթական վերջնարդյունք_ԿԵԱ կապ

Գծապատկեր 3.







1-ին և 2-րդ կուրսի դասընթացների Կրթական վերջնարդյունք_ԿԵԱ կապ

Կիրառական հոգեբանության ամբիոնում որակի ապահովման ուղղությամբ իրականացվել են հետևյալ աշխատանքները:

<u>Ենթակառուցվածքային և ծրագրային ուսումնասիրություններ</u>

1. Ներամբիոնային օղակներում որակի ապահովմանը ուղղված առկա խնդիրների քննարկում( սեպտեմբեր-հոկտեմբեր)
2. Ամբիոնի ուսումնական, հետազոտական գործունեության վերլուծություն (2018-2019 ուս տարի նոյեմբեր)
3. SWOT վերլուծության իրականացում(2018-2019 ուս. տարի նոյեմբեր)
4. Ներքին և արտաքին լավագույն փորձի /բենչմարքինգի իրականացում (ուս. տարվա ընթացքում)

<u>Ամբիոնի կրթական, հետազոտական և ռեսուրսներից բավարարվածության ուսումնասիրություն</u>

Ուսումնական տարվա սկիզբ *2018-2019*թ

Դասալսումների հարց

1. Իրականացվել են դասալսումներ:

2. Առաջարկվել են հստակեցնել անցկացման ժամանակացույցը, հաճախականությունը:

Թեզերի վերնագրերի հարց

1. Իրականացվել են կուրսային, ավարտական աշխատանքներում բարելավման միջոցառումներ՝ նախորդ տարվա փորձի քննարկման և վերլուծության հիման վրա:

2. Առաջարկվել են, որ վերնագրերը չկրկնեն միմյանց, ինչպես նաև չկրկնեն նախորդ տարիների թեզերի վերնագրերը, համապատասխանեն ժամանակի հրամայականին և արտացոլեն նորագույն գիտակրթական միտումները:

Ընտրովի դասընթացների հարց

1. Իրականացվել են ընտրովի դասընթացների վերանայման հարցի քննարկում:

2. Առաջարկվել են մշտադիտարկման արդյունքում ընտրովի դասընթացների ցանկի փոփոխություն, նորերի ներգրավում:

Մագիստրոսների պրակտիկաների հարց

1. Իրականացվել են մագիստրոսների պրակտիկաների բազաների և պատպանության անցկացման հարցի քննարկում:

2. Առաջարկվել են մագիստրոսների պրակտիկան ենթակա դարձնել հանրային պաշտպանության:

Որակի գործընթացների արդյունավետություն

*2018-2019*ուս տարվա ընթացքում

3. Իրականցավել են որակի գործընթացների արդյունավետությանն ուղղված քննարկումներ աշխատանքային խմբի անդամների հետ:

**4.** Առաջարկվել են իրականցնել ամբիոնում ՄԿԾ /մասնագիտական կրթական ծրագրեր/ առկա վիճակի գնահատում և կարիքների վերլուծություն:

<u>Քլասռում հարթակի արդյունավետության բարելավման ուղղությունների մշակում:</u>

1. Իրականացվել են քննարկումներ ուղղված էլեկտրոնային ուսուցման հարթակում ուսանողներին տրվող հանձնարարությունների հարցը: Ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի կողմից իրականացված քննարկուների արդյունքում եկան այն եզրակացության, որ նպատակահարմար չէ, որ Classroom էլեկտրոնային հարթակում տեղադրվեն գնահատվող առաջադրաքներ, քանի որ դա չի նպաստում առաջադրանքը կատարողի իմացական ձեռքբերման գնահատմանը:

2. Առաջարկվել է, որ առաջադրանքները նպատակահարմար է իրականացնել բանավոր և ինտերակտիվ , որոնք ուղղված են ձևով :

<u>Բակալավրիական և մագիստրոսական կրթական ծրագրերի կառուցվածքի և բովանդակության բարելավման ֆայլերի բարեփոխելու հարցի քննարկում</u>**:** *2018-2019*ուս տարի նոյեմբեր-դեկտեմբեր

1. Իրականացվել են ՄԿԾ-ների բարելավման ֆայլերի իրականացմանն ուղղված առաջարկների քննարկում:

2. Առաջարկվել են ՄԿԾ խմբերը սահմանված ժամկետներում իրականացնեն ՄԿԾ հենանշում և արդյունքների ներկայացում:

<u>Լավագույն փորձի ուսումնասիրության ծրագիր</u>

1. Իրականացվել են ուսումնասիրություններ Հայաստանի և արտերկրի բուհական համակարգերի միջև,ինչպես նաև նմանօրինակ ծրագրերի հենանշում և ՄԿԾ-ների համապատասխանեցում ազգային և ոլորտային շրջանակներին:

2. Առաջարկվել են ՄԿԾ-ների համապատասխանեցում ազգային և ոլորտային շրջանակներին սահմանված ժամկետներում:

<u>Առարկայական նկարագրի նոր ձևաչափի ներդրում</u>

1. Իրականցվել են նոր ձևաչափով առարկայական նկարագրերի ներդրում սահմանված ժամկետներում:

2. Առաջարկվել են ներդնել ՈԱ շրջանակներում առաջարկվող առարկայական նկարագրերի նոր ձևաչափը բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի առաջին կուրսերում :

Սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոնը որակի ապահովման ուղղությամբ իրականացրել է հետևյալ աշխատանքները․

**1.** Անհրաժեշտ փաստաթղթերի պլանավորում

1. Սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոնի որակի ներքին ապահովման համակարգի միջոցառումների նախապատրաստում
2. Սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոնի Որակի ապահովման միջոցառումների պլանի հաստատում
3. Սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոնի որակի ներքին ապահովման ամբիոնային աշխատանքների իրականացում ըստ ընթացակարգերի

**2.** Որակի ապահովման գործընթացների կառավարում

1. Որակի ապահովման գործընթացների կառավարում համաձայն ՀՊՄՀ ՈԿ ուղեցույցի /փաստաթղթավորում, սոցիոլոգիա և սոցիալական աշխատանք մասնագիտություններից կրթության ղեկավարում/

**3.** Մասնագիտության կրթական ծրագրի **(ՄԿԾ)** զարգացում և իրականացում

1. Բակալավրի և մագիստրոսի մասնագիտական կրթական ծրագրերի /առկա և հեռակա/ կառուցվածքը և բովանդակությունը սահմանող նորմատիվային փաստաթղթերի /մասնագրեր, առարկայական նկարագրեր/ վերանայում՝

- Սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի մասնագիտությունների կրթական ծրագրերի խորքային վերլուծություն
- ՄԿԾ-ի վերաբերյալ ստացված ամբողջական տեղեկատվության հիման վրա բարելավման պլան-ծրագրի մշակում
- Վերջնարդյունքներին ուղղված ՄԿԾ-ների ստեղծում
- Մասնագիտական կրթական ծրագրի մշտադիտարկում, պարբերական գնահատում, բարելավում

**4.** Ուսումնառության և ուսանողական կյանքի կազմակերպում

1. ՀՊՄՀ-ում ստեղծված նորարարական կրթական միջավայրի ակտիվ կիրառության ապահովում՝ ուսանողների և դասախոսների շրջանում կրթական էլեկտրոնային հարթակի և համացանցի սոցիալական ռեսուրսների, սոցիալական մեդիայի միասնականացման միջոցով
2. Նորարարական կրթական միջավայրի կիրառման /դասախոսների և ուսանողների/ ընթացքի ու արդյունավետության մշտադիտարկում
3. Պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից կրթական անհատական մոտեցումների ներդնում էլեկտրոնային ուսում-նամեթոդական փաթեթներում և հարթակում

**5.** Պրոֆեսորադասախոսական կազմի զարգացում և կատարելագործում

1. Ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի աշխատությունների հրատարակման ակտիվության խթանում հեղինակավոր, միջազգային վարկանիշային ամսագրերում

**6.** Որակի ապահովման գործընթացների մշտադիտարկում

1. Մասնակցություն ներամբիոնային և համահամալսարանական օղակներում որակի ապահովման խնդիրների քննարկմանը
2. Մասնակցություն ամբիոնի ուսումնական, գործունեության վերլուծություններին /դասալսումներ, դասընթացների գնահատում /օրինակը կցվում է/;
3. Ինքնավերլուծության իրականացում ամբիոնի գործընթացի մասին:

Հաշվի առնելով ֆակուլտետում որակի ապահովմանն ուղղված աշխատանքների արդյունքները՝ ներկայացնում ենք մի շարք առաջարկություններ գործընթացի բարելավման ուղղությամբ.

1. Պարբերաբար կազմակերպել կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչության հետ համատեղ քննարկումներ, սեմինարներ, վերապատրաստումներ, կլոր սեղաններ՝ կարիքների վերհանման և որակի ապահովման գործընթացների արդյունավետության բարձրացման նպատակով:
2. Կազմակերպել ներբուհական և միջբուհական գիտաժողով՝ նվիրված կրթության որակի ապահովման ժամանակակից գործընթացներին առկա խնդիրներին, որտեղ ներգրավված կլինեն բոլոր շահառու կողմերը: :
3. Ֆակուլտետում մագիստրոսական կրթական ծրագրով նախատեսված մասնագիտական պրակտիկաներն առավել արդյունավետ կազմակերպելու և կրթական վերջնարդյունքների նպատակամետ ձեռքբերումն ապահովելու նպատակով ոչ միայն կազմակերպել բակալավրիատի հենքի վրա, այլև ընդլայնել պրակտիկաների բազաները նեղ մասնագիտական հաստատություններում:
4. Ստեղծել գիտահետազոտական գործունեությունն ապահովող ռեսուրսներ /ուսումնական և գիտահետազոտական լաբորատորիաներ/:
5. Ընդլայնել համագործակցության շրջանակները և նպաստել համատեղ մագիստրոսական կրթական ծրագրերի իրականացմանը:

| |
|---|
| Ներկայացնել որակի ներքին ապահովման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության աստիճանը: |
| Տես.՝ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ |